ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻ 4

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

UBS[4]	NKJV	NRSV	TEV	NJB
Մարմնի միասնությունը	Քայլել միասնության մեջ	Հավատքի միասնությունը պահելու հորդոր	Մարմնի միասնությունը	Միասնության կոչ
4:1-8	4:1-6	4:1-16	4:1-6	4:1-6
	Հոգևոր պարգևներ			
	4:7-16		4:7-16	4:7-16
4:9-16				
Հին և Նոր կյանքը	Նոր մարդը	Հեթանոսական ապ-րելակերպից հրա-ժարվելու հորդոր	Քրիստոսի մեջ Նոր Կյանքը	Քրիստոսի մեջ Նոր Կյանքը
		(4:17-5:20)		
4:17-24	4:17-24	4:17-24	4:17-19	4:17-24
			4:20-24	
Կանոններ Նոր Կյանքի համար	Մի՛ վշտացրեք Հոգուն			
4:25-5:5	4:25-32	4:25-5:2	4:25-32	4:25-5:20

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց»)
ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

ՀԱՄԱՏԵՔՍՏԱՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 4:1-32

Ա.4-րդ գլուխը մեկնարկում է նամակի գործնական բաժինը (այսինքն՝ «քայլել», տես՝ Եփես.4:1, 17, 5:2,15): Վարդապետությունը պետք է ազդի ապրելակերպի վրա: Փրկությունը ապրանք չէ, կամ ապահովագրություն, կամ էլ երկինք գնալու տոմս, այլ հարատև ապաշխարություն՝ հավատքի փոխհարաբերություն Քրիստոսի հետ, որի արդյունքը Քրիստոսնին նմանվելն է՝ Քրիստոսակերպությունը:

Բ.1-6 համարները կենտրոնանում են ամբողջ գրքի թեմայի՝ միասնության վրա (տես՝ Եփես. 1:10): Հավատացյալների միասնությունը՝ միաբանությունը հիմնված է Եռամեկ Աստծո միաբանության վրա: Ավետարանի հավաքական հաղորդակցությունը մարտահրավեր է սուտ վարդապետների և հրեաների բացառիկությանը: Միաբանության առաջնորդող հոգևոր հատկությունները սահմանվում են 2-3 համարներում: Միաբանությունը յուրաքանչյուր հավատացյալի պատասխանատվությունն է: Միաբանությունը Հիսուսի աղոթքն էր (տես՝ Հովհ.17:11, 21-22, նաև ուշադրություն դարձրեք՝ Եփես.4:23):

Գ.Միաբանությունը պետք է լինի շարունակական և մտադրված հետևողականությամբ՝ Աստծո ժողովրդի զանազան պարգևների պատճառով: Փրկության ժամանակ յուրաքանչյուր հավատացյալի տրվում է արդյունավետ ծառայության պարգև (տես՝ 1 Կորնթ.12:7,10): Այն փաստը, որ հավատացյալները Հիսուսի շնորհալի ծառայողներն են, ոչ թե ամեն մեկը ինչ-որ հատուկ պարգև ունի, հանդիսանում է եկեղեցում միաբանության սիրտը: Հավատացյալները մեկ մարմին են կազմում և պետք է գործեն միասին՝ միաբան:

Դ.Ժամանակակից արևմտյան եկեղեցին Եփես.4:11-12-ի ճշմարտության խիստ կարիքն ունի: Եկեղեցու առաջնորդները Քրիստոսի մարմնի (եկեղեցու) պարգևներն են, որոնք տրվել են օգնելու և քաջալերելու ամբողջ մարմինը ծառայության մեջ ճիշտ գործելու համար: Ծառայությունը բոլոր հավատացյալների գործն է: Նոր Կտակարանում չկան այսպես կոչված «գրասենյակային աշխատողներ»: Եթե դու Քրիստոնյա ես, ապա դու կանչված, շնորհալի՝ պարգև ունեցող, ամբողջ դրույքով ծառայող ես: Ոչ բոլորն են կանչված լինելու մասնագետ, սակայն բոլորն էլ կանչված են ծառայելու:

Եկեղեցու առաջնորդների գործը (Եփես.4:11) Աստծո ժողովրդին մարզել՝ սովորեցնել ծառայության գործը կատարելու, որն է կորածներին ավետարանելը, իսկ փրկվածներին օգնել հասունանալ (Եփես.4:12, Մատթ.28:19-20):

Ե.Եփեսացիների 4:17-5:20 նկարագրում է կա՛մ հեթանոսության մեղքերը (Եփես.4:17) կա՛մ էլ Անտինոմիան Գնոստիկ սուտ վարդապետների ուսմունքները: Թե ինչպես են ապրում հավատացյալները՝ շատ կարևոր է: Չկա պտուղ՝ չկա նաև արմատ (տես՝ Մատթևոս 6, 7:15-23): Հավիտենական կյանքն ունի տեսանելի հատկություններ: Հավատացյալների փոխված և փոխող կյանքերը նրանց փրկության վկայությունն են (տես՝ Հակոբոս, 1 Հովհաննես):

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻ 4:1-6

[1]Ուստի աղաչում եմ ձեզ, ես՝ Տիրոջ համար բանտարկյալս, որ դուք այնպես քայլեք, ինչպես վայել է այն կոչմանը, որի մեջ կանչվեցիք, [2]ամենայն խոնարհությամբ, հեզությամբ ու համբերատարրությամբ, սիրով իրար հանդուրժելով, [3]ջանալով Սուրբ Հոգու միաբանությունը պահել խաղաղության կապով: [4]Մե՛կ մարմին, մե՛կ Հոգի, ինչպես մե՛կ հույսով կանչվեցիք ձեր կոչմանը, [5]մե՛կ Տեր, մե՛կ հավատ, մե՛կ մկրտություն, [6]մե՛կ Աստված, Հայր բոլորի, որ բոլորի վրա է, բոլորի հետ և ձեր բոլորի մեջ:

4:1 «Տիրոջ համար բանտարկյալս» Բառացի «Տիրոջ մեջ»: Սա Պողոսի բանտից ուղարկված նամակներից մեկն է, որը հավանաբար գրվել է Հռոմում՝ 60-ականների սկզբին: Այն տարբերվում է 3:1-ից, որը արձանագրում է «Հիսուս Քրիստոսի կապյալը՝ բանտարկյալը»: Պողոսը հավատացյալներին

դիտարկում էր որպես Քրիստոսով պարփակված՝ բովանդակված մարդկանց: Նրանք ապրում և շարժվում են և գոյություն ունեն Նրա մեջ (տես՝ Հոբ 12:10, Դան.5:23, Գործք 17:28):

❖ **«այնպես քայլեք, ինչպես վայել է»** Սրանով սկսվում է նամակի գործնական բաժինը: Միաբանությունը պահպանվում է Քրիստոսի պես ապրելու մտադրված՝ նպատակային գործողություններով (տես՝ Եփես.2:2, 10, 4:1, 17, 5:2, 15, Կող.1:10, 2:6): Քրիստոնեությունը սկզբնական որոշում է, որին հետևում է աշակերտության ապրելակերպը (այսինքն՝ դարպասը և ճանապարհը, տես՝ Մատթ.7:13-14): Սրան է հետևում այն նույն զաղափարը, որը որդեգրել էր առաջին եկեղեցին՝ «Ճանապարհը» (տես՝ Գործք 9:2, 19:9, 23, 22:4, 24:14,22): «Արժանի» կամ հայերենում «վայել» բառը գեղեցիկ նկարագրվում է 1 Հովհաննես 2:6-ում:

Ուշադրություն դարձրեք, որ մենք պետք է քայլենք արժանի՝ վայել կերպով, մեր կոչման պատճառով և ոչ թե, որ կոչում ստանանք: Այս օրինակը հետևում է Եփես.2:8-9, 10-ին: Մենք պետք է բարի գործեր անենք, քանի որ շնորհքով ենք փրկված՝ հավատքի միջոցով: Բարի գործերը և արժանի կերպով ապրելը հնարավոր են միայն այն դեպքում, երբ մենք փրկված ենք և մեր մեջ Սուրբ Հոգին է բնակվում: Դրանք արդյունքն են և ոչ թե միջոցները (տես՝ Եփես.2:8-9):

Փրկությունը դարպասն է՝ դուռը, որին հաջորդում է ճանապարհը:: Այն ձրի պարգև է, որին հետևում է «ամեն ինչ արժեցած» կյանքը:

❖ **«այն կոչմանը, որի մեջ կանչվեցիք»** Սա անորոշ կատարյալ կրավորական սահմանական է: Կոչումը միշտ Աստծուց է (տես՝ Հովհ.6:44, 65): «Կոչում» բառը ստուգաբանորեն կապված է «եկեղեցի» տերմինի հետ՝ Եփես.3:21-ում: Ըստ երևույթին այս տերմինի հետ կապված բառախաղ կա (տես՝ Եփես.4:1 /երկու անգամ/ և 4-ում /երկու անգամ/):

Հավատացյալները կանչված են սրբության (տես՝ Եփես.1:4): Սա ընտրության վարդապետությանաստվածաբանական հավասարակշռությունն է. մարդկությունը պետք է ընդունի Աստծո կողմից նախաձեռնված կոչումը՝ կանչը (տես՝ Եփես.1:13): Ինքնիշխան Աստվածը ընտրել է ընդունել մեղավոր մարդկությանը Քրիստոսի գործի և նրանց զղջացող հավատքի պատասխանի միջոցով (տես՝ Մարկ.1:15, Գործք 3:16, 19, 20:21): Այդ անկախ՝ սուվերեն կոչումը և անհրաժեշտ պատասխանը հանդիսանում են ՀԿ և ՆԿ ուխտերի աստվածաբանական զույգ սյուները, սակայն երրորդ սյունը հանդիսանում է աստվածահաճո կյանքը: Աստված ուզում է մի այնպիսի ժողովուրդ, որը կարտացոլի Իր բնավորությունը (այսինքն՝ Սուրբեր, տես՝ 1 Պետ.1:13-25):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԿԱՆՉՎԱԾ
SPECIAL TOPIC: CALLED

Միշտ Աստված է նախաձեռնությունը վերցնում հավատացյալներին դեպի Իրեն կանչելու, ընտրելու և հետամուտ լինելու հարցում (տես՝ Հովհ.6:44,65, 15:16, 1 Կորնթ.1:1-2; Եփես.1:4-5,11): «Կոչում» տերմինը մի քանի աստվածաբանական նշանակությամբ է գործածվում:

Ա. ՀԿ-ում «անունը կանչելը» միշտ երկրպագության համատեքստում էր առկա (տես՝ Ծննդ.4:26, 12:8, 21:33, 26:25, Ելից 34:5):

Բ. Մեղավորները փրկության են կանչված Աստծո շնորհքով (այսինքն՝ Ելից 34:6-7) Քրիստոսի կատարած գործի և Հոգու կողմից համոզվելու շնորհիվ (այսինքն՝ *klētos,* տես՝ Հռոմ.1:6-7, 9:24, որը աստվածաբանորեն նման է 1 Կորնթ.1:1-2 և 2 Տիմ.1:9, 2 Պետ.1:10):

Գ. Մեղավորները կանչում են Տիրոջ անունը փրկվելու համար (այսինքն՝ *epikaleō,* տես՝ Գործք 2:21, 22:16, Հռոմ.10:9-13): Այս սահմանումը երկրպագության հրեական դարձվածք է:

Դ. Հավատացյալները կանչում են Նրա Անունը ճգնաժամերի և ճնշումների ժամանակ (այսինքն՝ Գործք 7:59):

Ե. Հավատացյալները կանչված են Քրիստոսանման կյանքեր վարելու (այսինքն՝ *klēsis*, տես՝ 1 Կորնթ.1:26, 7:20, Եփես.4:1, Փիլ.3:14, 2 Թեսաղ.1:11, 2 Տիմ.1:9):

Զ. Հավատացյալները կանչված են ծառայության գործին (տես՝ Գործք 13:2, 1 Կորնթ.12:4-7. Եփես. 4:1):

4:2

NASB, NRSV	**«ամենայն խոնարհությամբ»**
NKJV	**«ամենայն հեզությամբ»**
TEV	**«խոնարհ եղեք»**
NJB	**«կատարյալ անձնուրացությամբ»**

Այս տերմինը սկսում է Քրիստոնեական առաքինությունների մի ցանկ, որը միաբանության արդյունք է: «Խոնարհությունը» յուրահատուկ Քրիստոնեական առաքինություն է, որը ընդգրկված չէր հույն բարոյագետների (Ստոիկների) առաքինությունների ցանկում: Թե՛ Մովսեսը (տես՝ Թվոց 12:3) և թե՛ Հիսուսը (տես՝ Մատթ.11:29) նկարագրվում են այս տերմինով: Պողոսն այն մի քանի անգամ կիրառում է (տես՝ Փիլ.2:3, Կող.2:18, 23, 3:12):

❖ **«հեզությամբ»** Սա վերաբերում է «ընտանի դարձված ուժին», ինչպես օրինակ վարժեցրած կենդանին: KJV թարգմանում է այն «մեղմություն»: Վայրի կենդանիներն ընտելացվում են, որպեսզի ծառայեն մարդկանց: Հավատացյալները «ընտելացվում են», որպեսզի ծառայեն իրար և ոչ թե մրցեն իրար հետ: Նպատակը հավաքական է, ոչ թե անհատական: Աստված չի ուզում կոտրել հավատացյալների հոգիները (տես՝ Սաղմոս 139, Նա է ստեղծել նրանց), այլ ուղղորդի նրանց զորությունը՝ ուժը Իր նպատակների համար: Սա Քրիստոնեական կյանքի վերաբերյալ Պողոսի ամենասիրելի փոխաբերություններից մեկն է (տես՝ 1 Կորնթ.4:21, 2 Կորնթ.10:1, Գաղ.5:23, 6:1, Կող.3:12, 1 Տիմ.6:11, 2 Տիմ.2:25, Տիտոս 3:2):

❖ **«համբերատարությամբ»** Այս տերմինը Պողոսի ևս մեկ սիրելի բառերից է (տես՝ Հռոմ.2:4, 9:22, 2 Կորնթ.6:6, Գաղ.5:22, Կող.1:11, 3:12, 1 Տիմ.1:16, 2 Տիմ.3:10, 4:2): Հավատացյալները համբերատար են մեկը մյուսի հանդեպ, քանի որ Աստված էլ իրենց հանդեպ է համբերատար: Թե՛ հեզությունը, և թե՛ համբերատարությունը Հոգու պտուղ են (տես՝ Գաղ.5:22-23):

❖ **«սիրով իրար հանդուրժելով»** Սա ներկա ժամանակի չեզոք սեռի դերբայ է: Հանդուրժողականությունը Պողոսի կողմից հաճախ օգտագործվող ևս մեկ տերմին է, որը իր թղթերում կիրառել է տասներկու անգամ: Ինչպես Աստված ունի հանդուրժող համբերատարություն անհավատաների հանդեպ (տես՝ Հռոմ.2:4, 9:22), այդպես էլ հավատացյալները պետք է շարունակեն այլ հավատացյալների հետ կապված մեղքերի և թերությունների հարցում (տես՝ 1 Տիմ.1:6) վարվել միևնույն գթառատությամբ: Հավատացյալները այն մարդկանց, որոնց համար Քրիստոսը մահացել է, պետք է համարեն իրենց շահից ավելի բարձր՝ իրենցից առաջ (տես՝ Հռոմ.14:1-15:13, Գաղ.5:22, Փիլ.2:3, 4:5, Կող.3:12-13): Այս անձնվիրումը ընդօրինակում է Հիսուսին (տես՝ 1 Հովհ.3:16) և ապացույցն է անկմանը բնորոշ հակումների հետադարձության:

4:3

NASB	**«ջանալով հարատևել»**
NKJV	**«ձգտելով պահել»**
NRSV	**«ամեն ջանք անելով պահպանելու»**
TEV	**«լավագույնս ձգտեք հարատևելու»**
NJB	**«ամեն ինչ արե՛ք, որ հարատևեք»**

Սա ներկա ներգործական դերբայ է ներկա ներգործական անորոշի հետ միասին: Նոր Անգլերեն Աստվածաշունչը այն թարգմանում է որպես «ջանք մի՛ խնայեք»: Միաբանությունն այս նամակի հիմնական կրկնվող միտքն է, ինչպես և Փիլիպպեցիների թղթի: Միաբանությունը Աստծո կամքն է Իր եկեղեցու համար (տես՝ Հովհ.17:11,21,23), սակայն դրան պետք է ջանասիրաբար, մշտապես, մտադրված և անհատապես հետամուտ լինել:

❖ **«միաբանությունը»** Հիշե՛ք, որ նպատակը միաբանությունն է և ոչ թե միատեսակությունը: Այս համարը շեշտում է մեկությունը՝ հերքելու գնոստիկների այն շոշտադրությունը, որ դրված էր (1) շատ էմանացիաների՝ ուղիների վրա և (2) մտավոր բացառիկության վրա: Հավատացյալները պետք է զգան Քրիստոսի Մարմնի (եկեղեցու) առաողջության համար կարիքը և անձնապես պատասխանատվություն վերցնեն դրա պահպանման համար: Անհատի իրավունքների և արտոնությունների, անձնական նախասիրությունների մերօրյա իրականության մեջ սա շատ անհրաժեշտ ճշմարտություն է:

❖ **«խաղաղության կապ»** Հավատացյալները անձնապես են պատասխանատու Քրիստոսի մարմնի (եկեղեցու, տես՝ Կող.3:14-15 և 1 Կորնթ.12:7) ընդհանուր առողջության և կենսունակության համար: Սա նկատի ունի քեզ: Միայն ակտիվ հնազանդությունը բոլորի բարիքի համար կարող է պահպանել խաղաղությունը (տես՝ Եփես.5:21): Տե՛ս Եփես.2:15-ի գրառումը:

4:4 «մեկ մարմին» Պողոսն այս փոխաբերությունը հաճած է կիրառում Եփեսացիներում (տես՝ Եփես.2:16, 3:6, 4:4, նաև Կող.1:18): Սա վերաբերում է տիեզերական եկեղեցուն՝ հաշվի առնելով նամակի շրջանառվող բնույթը (այսինքն՝ ուղարկված էր շատ եկեղեցիների համար): ՆԿ-ում «եկեղեցի» տերմինի կիրառության մեծ մասը վերաբերում է տեղական համայնքներին: Տիեզերական եկեղեցուն անդրադարձ է կատարվում Մատթ.16:18-ում և Եփեսացիներում: Շեշտադրությունը Աստծո ամբողջ ժողովրդի և եկեղեցիների միաբանության և մեկ լինելու վրա է:

❖ **«մեկ Հոգի»** Սա վերաբերում է Սուրբ Հոգուն: Առանց Հոգու անհնար է ճանաչել Աստծուն, զալ Քրիստոսին և ապրել Քրիստոնեական կյանքը միաբանության մեջ (տես՝ Հովհ.16:8-15): Տե՛ս Եփես.3:17-ի գրառումը: Գնոստիկները հաստատում էին, որ իբրև կան մի քանի «հոգիներ» կամ *աէոններ* (այսինքն՝ հրեշտակային մակարդակներ):

«Երրորդություն» տերմինը աստվածաշնչյան բառ չէ, սակայն գաղափարը անշուշտ աստվածաշնչյան է: Այն արտահայտվում է մի քանի հատվածներում (տես՝ Մատթ.3:16-17, 28:19, Հովհ.14:26, Գործք 2:33-34, 38-39, Հռոմ.1:4-5, 5:15, 8:9-10, 1 Կորնթ.12:4-6, 2 Կորնթ.1:21-22, 13:14, Գաղ.4:4-6, Եփես.1:3-14, 17, 2:18, 3:14-17, 4:4-6, 2 Թեսաղ.2:13, Տիտոս 3:4-6, 1 Պետ.1:2, Հուդա 20-21): Եթե Հիսուսը Աստված է և Հոգին անձ է, ապա Հուդայականության միաստվածությունը (տես՝ 2 Օրինաց 6:4-6, սակայն ուշադրություն դարձրե՛ք Եսայի 63:9-10) պետք է վերամեկնաբանվի մեկ աստվածային էության, սակայն երեք հավիտենական գոյակից, իրարից կախյալ, անձնական դրսևորումների լույսի ներքո: Առեղծվածային է, սակայն հստակ սուրբգրային ուսմունք: Տե՛ս Հատուկ Թեմա Եփես.1:3-ում:

❖ **«մեկ հույս»** Պողոսն այս տերմինը հաճախ կիրառում է մի քանի տարբեր, սակայն իրար հետ առնչվող իմաստով: Հաճախ այն կապված է հավատացյալի հավատքի վախճանի հետ: Վախճանը հաստատ է, սակայն ժամանակի գործոնը ապառնիով է և անհայտ: Տե՛ս <u>Հատուկ Թեմա. Հույս</u>, Կող.1:5-ում:

4:5 «մեկ Տեր» Այս տիտղոսն ունի թե՛ ՀԿ-յան հիմք՝ ՅԱՀՎԵԻ համար (տես՝ Ելից 3:14, տե՛ս <u>Հատուկ Թեմա. Աստծո անունները</u>, Կող.1:3-ում) և թե՛ ՆԿ-յան կիրառություն՝ կապված Հիսուսի աստվածության հետ (տես՝ Հռոմ.10:9, 1 Կորնթ.12:3, Փիլ.2:9-11): Միայն մեկ ճանապարհ՝ կերպ կա, որով կարելի է ուղիղ՝ շիտակ լինել Աստծո առաջ՝ Քրիստոսին հավատալը (տես՝ Հովհ.1:9-18, 3:16, 10:7-18, 14:6, 20:31):

❖ **«մեկ հավատք»** Սա վերաբերում է կա՛մ այն վարդապետությանը (տես՝ Գաղ.1:23, 3:23, 25, Փիլ.1:27, Հուդա 3, 20), որը հարմարում է Եփեսացիների և Կողոսացիների ավելի ընդարձակ

կոնտեքստին, կա՛մ էլ անձնական վստահությանը, որն ավելի շատ է հարմարում հենց այս կոնտեքստին (տես՝ Գաղ.2:16, 3:6-9):

❖ **«մեկ մկրտություն»** Այս համատեքստում Երրորդության վերաբերյալ ավելի շուտ նշված լինելու պատճառով, սա հավանաբար վերաբերում է ջրի մկրտությանը, որը վաղ եկեղեցու հրապարակային հավատքի դավանության կերպն էր (տես՝ Մատթ.28:19, Հռոմ.10:9-13): Այն խորհրդանշում է հին կյանքի մահը և Քրիստոսում նոր կյանքի սկիզբը (Հռոմ.6:4, Կող.2:12):

Սակայն այն կարող է վերաբերել Հոգու մկրտությանը (տես՝ Գործք 2:38, 1 Կորնթ.12:13): Չնայած որ Եփես.4:4-ում նշվում է Հոգու մասին, այս երկու նախնական իրադարձությունները՝ մեկը ներքին (Հոգու մկրտությունը) և մյուսը՝ արտաքին (ջրի մկրտությունը), ՆԿ-ում սերտորեն կապված են:

4:6 «մեկ Աստված, Հայր բոլորի» Ինչ-որ տեղ ապշեցնող է Աստծուն Հայր կոչելը (տես՝ Մաղ.2:10): Մի կարևոր իմաստով բոլոր մարդիկ կապված են Աստծո հետ: Նա՛ է ստեղծել նրանց, Նրա՛ պատկերով և նմանությամբ (տես ՝ Ծնն.1:26-27): Բայց այս համատեքստը չի շեշտադրում ստեղծագործությունը, այլ վերաստեղծումը՝ երկրորդ ծնունդը, Եռամեկ Աստծո ջանքերով փրկությունը (տես՝ Եփես.1:3-14): Աստծո առաջ ստեղծագործության միջոցով ոչ մի մարդ էլ ուղիղ՝ շիտակ չէ, այլ միայն անձնական ապաշխարության և Քրիստոսի կատարած գործի վրա հավատքի միջոցով (տես՝ Մարկ.1:15, Գործք 3:16, 19, 20:21):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄՈՆՈԹԵԻԶՄ /միաստվածություն/
SPECIAL TOPIC: MONOTHEISM

Մարդկությունը միշտ զգացել է, որ իրականությունը ավելին է քան միայն ֆիզիկականը (այսինքն՝ իրենց վերահսկողությունից դուրս գտնվող երևույթների կողմից ազդեցություն ունենալը, ինչպես օրինակ՝ փոթորիկները, խավարումները, եղանակը, աղետները, մահը, և այլն): Մարդաբանները մեզ ասում են, որ պարզագույն հոմինոիդների գերեզմաններում գտնում են իրեր, որոնք ըստ երևույթին հաջորդ կյանքի համար են եղել դրված, որը նրանք դիտարկում էին որպես այս կյանքի երկարացում:

Առաջին գրառված մշակույթը շումերականն է (հարավային Տիգրիս, Եփրատ գետերը), որը սկիզբ է առել Ք.Ա.10000-8000թթ: Նրանք գրում էին բանաստեղծություններ, որով արտահայտում էին իրենց տեսակետը աստվածների և նրանց փոխհարաբերությունների վերաբերյալ, ճիշտ ինչպես մարդիկ՝ իրենց բոլոր թերություններով հանդերձ (այսինքն՝ ինչպես հետագայում Քանանի, Հունաստանի և Հռոմի պանթեոնները): Նախքան գրի առնվելը նրանց ավանդույթները գոյատևել էին բանավոր տեսքով:

Գոյություն ուներ ժամանակագրական աստվածաբանական զարգացում՝

1. անիմիզմից դեպի
2. բազմաստվածություն, այդտեղից էլ՝
3. բարձրյալ աստծուն (կամ դուալիզմ)

«Միաստվածության» հասկացությունը (միայն մեկ Աստված), ոչ թե պարզապես բազմաստվածության «ամենաբարձր աստված» կամ պարսկական դուալիզմի բարի աստվածը (Զրադաշտականություն), յուրահատուկ է Իսրայելին (Աբրահամ, Ք.Ա. 2000): Միայն մեկ բացառություն կա շատ կարճ ժամանակով Եգիպտոսում (Ամենհոտեպ IV, նաև հայտնի որպես Ախենաթեն, Ք.Ա.1367-1350 կամ 1386-1361):

Այս գաղափարը ՀԿ-ում արտահայտվում է մի քանի հատվածներում:

1. «չկա ոչ ոք ՅԱՀՎԵ-ի կամ *Elohim*-ի պես»՝ Ելից 8:10; 9:14; 2 Օր.33:26; 3 Թագ.8:23
2. «ոչ ոք բացի Նրանից»՝ 2 Օր.4:35,39, 32:39, 1 Թագ.2:2, 2 Թագ.22:32, Ես.45:21, 44:6,8, 45:6,21
3. «ՅԱՀՎԵՆ մեկն է»՝ 2 Օր.6:4, Հռոմ.3:30, 1 Կորն.8:4,6, 1 Տիմ.2:5, Հակ.2:19
4. «չկա Քեզ պես մեկ»՝ 2 Թագ.7:22; Երեմ.10:6

5. «միայն Դու ես Աստված»՝ Սաղմ.86:10; Ես.37:16
6. «Ինձանից առաջ Աստված չեղավ, և ինձանից հետո չի լինելու»՝ Ես.43:10
7. «Ինձանից բացի ուրիշ Աստված չկա… ուրիշը չկա»՝ Ես.45:5,6,22
8. «Նա է ամեն բանի աղբյուրը»՝ Ես.45:7 (տես՝ Ամովս 3:6)
9. «Նրանից բացի ուրիշ Աստված չկա»՝ Ես.45:14,18
10. «Ինձանից բացի ուրիշ Աստված չկա»՝ Ես.45:21
11. «Ես եմ Աստված ու Ինձ նմանը չկա»՝ Ես.46:9

Պետք է ընդունել, որ այս կենսականորեն կարևոր վարդապետությունը հայտնությամբ աստիճանաբար է տրվել: Սկզբնական սահմանումը հավանաբար հասկացվել է որպես «հենոթեիզմ» կամ գործնական մոնոթեիզմ (այսինքն՝ գոյություն ունեն այլ աստվածներ, սակայն մեր համար կա միայն մեկը (տես՝ Ելից 15:11, 20:2-5, 2 Օր.3:28, 5:7, 6:4,14, 10:17, 32:12, 3 Թագ.8:23, Սաղմ.83:18, 86:8, 136:1-2):

Առաջին տեքստերը, որ սկսել են մատնանշել եզակիություն՝ (փիլիսոփայական մոնոթեիզմ) վաղ շրջանի են (Ելից 8:10; 9:14; 2 Օր.4:35, 39; 33:26): Լիարժեք և կատարյալ սահմանումները գտնվում են Եսայի 43-46 (տես՝ 43:11; 44:6,8; 45:7,14,18,22; 46:5,9):

ՀԿ-ը արժեզրկում է ազգերի աստվածներին որպես՝

1. մարդու ձեռքի գործեր՝ 2 Օրինաց 4Լ28, 4 Թագ.19:18, Սաղմ.115:4-8, 135:15-18, Ես.2:8, 17:8, 37:19, 40:19, 41:7,24,29, 44:10, 12, 46:6-7, Երեմ.10:3-5, Հայտն.9:10
2. դևեր՝ 2 Օրինաց 32:17, Սաղմ.106:37, Ես.8:19, 19:3գ, 1 Կորնթ.10:20, Հայտն.9:20
3. ունայնություն, դատարկություն՝ 2 Օրինաց 32:21, 4 Թագ.17:15, Սաղմ.31:6, Ես.2:18, 41:29, Երեմ.2:5, 10:8, 14:22, Երեմ.2:5, 8:19
4. չաստվածներ՝ 2 Օրինաց 32:21, 2 Մնաց.13:9, ես.37:19, Երեմ.2:11, 5:7, 1 Կորնթ. 8:4-5, 10:20, Հայտն.9:20:

ՆԿ-ը վկայակոչում է 2 Օր.6:4-ը Հռոմ.3:30; 1 Կորն.8:4,6; Եփես.4:6; 1 Տիմ.2:5 և Հակ.2:19-ում: Հիսուսը մեջբերում է այն որպես առաջին պատվիրան Մատթ.22:36-37; Մարկ.12:29-30; Ղուկ.10:27: Թե՛ ՀԿ-ը և թե՛ ՆԿ-ը հաստատում են այլ հոգևոր էակների իրողությունը (դևեր, հրեշտակներ, տես՝ Հատուկ Թեմա.Հրեշտակներ և դևեր), սակայն միայն մեկ արարիչ/փրկիչ Աստված (ՅԱՀՎԵ, Ծննդ.1:1):

Աստվածաշնչյան միաստվածությունը ՀԿ-ում բնութագրվում է՝

1. Աստված մեկ է և բացառիկ (գոյաբանությունը ենթադրվում է, ոչ թե մատնանշվում)
2. Աստված անձ է (տես՝ Ծննդ.1:26-27, 3:8)
3. Աստված բարոյական է (տես՝ Ելից 34:6, Նեեմ.9:17, Սաղմ.103:8-10)
4. Աստված մարդուն Իր պատկերով է ստեղծել (Ծննդ.1:26-27) հաղորդակցվելու համար (այսինքն՝ #2): Նա նախանձոտ Աստված է (տես՝ Ելից 20:2-3):

Նոր Կտակարանից.

1. Աստված ունի երեք հավիտենական, անձնական դրսևորումներ (տես՝ Հատուկ Թեմա. Երրորդություն, 8:11)
2. Աստված կատարելապես և ամբողջովին հայտնեց Իրեն Հիսուսի մեջ (տես՝ Հովհ.1:1-14, Կող.1:15-19, Եբր.1:2-3)
3. Ընկած մարդկության փրկության համար Աստծո հավիտենական ծրագիրը Իր միակ Որդու քավության զոհն է (Եսայի 53, Մարկ.10:45, 2 Կորնթ.5:21, Փիլ.2:6-11, Եբրայեցիներին, տես՝ Հատուկ Թեմա.ՅԱՀՎԵԻ հավիտենական փրկության ծրագիրը):

❖ **«որ բոլորի վրա է, բոլորի հետ և ձեր բոլորի մեջ»** ՆԿ-ը շեշտադրում է Հոր վերջնական՝ ամենաբարձր լինելը (տես՝ 1 Կորնթ.3:23, 15:28): Այս համատեքստը օրինակ է, թե ինչպես է Աստվածաշունչը Աստվածության երեք անձերի փրկարար գործողությունները միաձուլում: Այստեղ շեշտադրվում է Հոր ներբնակեցումը (տես՝ Հովհ.14:23): Մատթևոս 28:20-ում և Կող.1:27-ում Որդու ներբնակեցումն է շեշտադրվում: Այնուհանդերձ ընդհանրապես Հոգին է նշանակված այս գործի համար (տես՝ Հովհ.14:17, Հռոմ.8:9): Այս համատեքստն արտահայտում է Հոր առաջնայնությունը

(տես՝ Եփես.1:3-14, Հռոմ.11:36): Կող.1:16-ում այս նույն տերմինաբանությունը կիրառվում է Որդու համար: Ներդաշնակությունն ու հավասարությունն է հոսում Երրորդության անձանց միջև իրենց գործողություններում, որը մարդկությանը փրկություն է բերում:

«Բոլոր» (*pas*) տերմինը կրկնվում է մի քանի անգամ հատուկ շեշտադրման համար: Քերականորեն այն կարող է լինել չեզոք սեռի՝ նկատի ունենալով ամբողջ ստեղծագործությունը կամ արական սեռի՝ նկատի ունենալով Քրիստոսի մարմինը (եկեղեցին)՝ թե՛ հավաքական և թե՛ անհատական իմաստով:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻ 4:7-16

7Բայց մեզնից ամեն մեկին շնորհ է տրված Քրիստոսի պարգևի չափով: 8Դրա համար Նա ասում է, թե. «Երբ բարձունքները ելավ, Նա գերությանը գերի վերցրեց և մարդկանց պարգևներ տվեց»: 9(Արդ, ի՞նչ է «ելավ» ասելը, եթե ոչ, որ նախ երկրի ստորին կողմերն էր իջել: 10Նա, որ իջավ, նույն Ինքն է, որ բոլոր երկինքներից վեր բարձրացավ, որպեսզի ամեն ինչ լցնի): 11Եվ Նա մի քանիսին տվեց, որ առաքյալներ լինեն, մի քանիսին՝ մարգարեներ, մի քանիսին՝ ավետարանիչներ, մի քանիսին՝ հովիվներ և ուսուցիչներ՝ 12սրբերի կատարելության համար, ծառայության գործի համար, Քրիստոսի մարմնի շինության համար. 13մինչև բոլորս էլ հասնենք հավատի միասնության և Աստծո Որդու ճանաչմանը, կատարյալ մարդ լինելու, Քրիստոսի կատարյալ հասակի չափը ունենալու, 14որպեսզի այլևս երեխա չլինենք, որոնք այս ու այն կողմ են տարուբերվում, վարդապետության ամեն մի քամուց քշվում են՝ մարդկանց խաբեբայությամբ, որոնք խորամանկությամբ խաբում ու մոլորեցնում են. 15այլ սիրով ճշմարտությունը խոսելով, ամեն բանում աճեք Նրա՛ մեջ, որ գլուխն է, այսինքն՝ Քրիստոսի, 16Ումից բոլոր մարմինը, հոդերի միջոցով միացված և միահյուսված, յուրաքանչյուր մասի ներգործուն աշխատանքի չափով, աճում է և կառուցվում սիրո մեջ:

4:7 «մեզնից ամեն մեկին շնորհ է տրված» Ուշադրություն դարձրեք եկեղեցու հավաքական ձևաչափից դեպի անհատական ձևաչափի անցումը: Յուրաքանչյուր հավատացյալ ունի հոգևոր պարգև, որը տրվում է փրկության ժամանակ՝ Հոգու կողմից, համայնքի բարիքի համար (տես՝ 1 Կորնթ.12:7, 11): ՆԿ-ի պարգևների ցանկերը (տես՝ 1 Կորնթ.12:1-13, 28-29, Հռոմ.12:3-8, Եփես.4:11) ներկայացուցչական են և ոչ թե սպառիչ: Սա կարելի է տեսնել այն փաստից, որ պարգևների թվարկումը և դրանց հերթականությունները տարբերվում են:

Հավատացյալները հաճախ դառնում են ոչ արդյունավետ, եթե նրանք՝

1. պարծենում են պարգևներով
2. համեմատում են մի պարգևը մյուսով
3. սահմանում են յուրաքանչյուր պարգևի համար ստույգ հատկանիշներ

ՆԿ-ը չի կենում այս հարցերի մեջ: Իրականում հարցը կանչված, պարգևներով օժտված ծառայողների ընտանիքի, քահանաների թագավորության իրողությունն է (տես՝ 1 Պետ.2:5,9, Հայտն.1:6): Հավատացյալները կանչված են ծառայության, ոչ թե արտոնության:

❖ **«Քրիստոսի պարգևի չափով»** Հիսուսը Աստծո պարգևն է մեղավոր մարդկությանը: Նրա բնավորությունը («Հոգու պարգևները», 1 Կորնթ.12) և ծառայությունը («Հոգու պտուղը», Գաղ. 5:22-23) բաժանված են Իր ժողովրդի մեջ, որպեսզի երաշխավորվի, որ ավետարանը կտարածվի նրանց միասնության և Հոգու հետ համագործակցության միջոցով:

4:8 Սա մեջբերում է Սաղմ.68:18-ից, որը սկզբնապես վերաբերում էր ՅԱՀՎԵԻՆ: «Մարդկանց պարգևներ տվեց» արտահայտությունը գտնվում է Արամերեն Թարգում, Փեշիթա (Սիրիակ) և Քաղդեական թարգմանություններում, մինչդեռ «ստացավ պարգևներ մարդկանցից» արտայայտությունը՝ Մազորեթիկ Տեքստում (եբրայերեն տեքստը) և Սեպտուագինտայում (հունարեն թարգմանությունը): Պողոսն ըստ երևույթին վերցրել է մի ՀԿ-յան թարգմանություն, որն արտացոլում է իր աստվածաբանական տեսակետները: Աստված Քրիստոսով պարգևներ տվեց Իր ժողովրդին: Նա դա արեց ծառայության համար, և ոչ թե արտոնյալ պաշտոնի՝ դիրքի համար (տես՝ Մատթ.20:25-28, 23:1-12):

❖ **«գերությանը գերի վերցրեց»** Կողոսացիներում զուգահեռ խոսքը (տես՝ 2:15) ակնարկում է, որ այս համարը վերաբերում է Հռոմեական ռազմական հաղթական շքերթին, որտեղ բացահայտ ցուցադրվում էին պարտված ուժերը: Այստեղ այն վերաբերում է տիեզերքի հոգևոր թշնամական ուժերի վրա Քրիստոսի տարած հաղթանակին (հավանաբար կապված գնոստիկ *աէոնների* հետ):

4:9 Այս համարը վերաբերում է կա՛մ (1) Մարմնացմանը (տես՝ Փիլ.2:6-11) կա՛մ էլ (2) Հիսուսի Դժողք իջնելուն (տես՝ Գործք 2:31, Հռոմ.10:6-7, կամ հավանաբար 1 Պետ.3:18-20, 4:6, որն արտացոլվում է վաղ եկեղեցու հավատքի դավանաբանության մեջ՝ «իջավ դժողք»):

4:10 «բոլոր երկինքներից վեր» Սա «երկրի ստորին կողմերը» խոսքի զուգահեռ հակադրություն է: Հիսուսը թողեց երկինքը՝ մարդեղեն դառնալով: Նա վերադարձավ բարձրյալ երկինք որպես հաղթանակած Փրկիչ: Ուշադրություն դարձրե՛ք «երկինքներ» խոսքի հոգնակի թվին (տես՝ 2 Կորնթ.12:2): Ռաբբիները վիճաբանում են այս հարցի շուրջ, արդյոք երեք, թե՞ յոթ երկինք կա: Սա վերաբերում է Աստծո ներկայությանը կամ զահանիստ վայրին՝ ինչպես Հայտնություն 4-5-ում է:

<u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԵՐԿԻՆՔՆԵՐԸ</u>

SPECIAL TOPIC: THE HEAVENS AND THE THIRD HEAVEN

In the OT the term "heaven" is usually PLURAL (i.e., *shamayim*, BDB 1029, KB 1559). The Hebrew term means "height." God dwells on high. This concept reflects the holiness and transcendence of God.

In Gen. 1:1, the PLURAL, "heavens and earth," has been viewed as God creating (1) the atmosphere above this planet or (2) a way of referring to all of reality (i.e., spiritual and physical). From this basic understanding other texts were cited as referring to levels of heaven: "heaven of heavens" (cf. Ps. 68:33) or "heaven and the heaven of heavens" (cf. Deut. 10:14; 1 Kgs. 8:27; Neh. 9:6; Ps. 148:4). The rabbis surmised that there might be

1. two heavens (i.e., R. Judah, Hagigah 12b)

2. three heavens (Test. Levi 2-3; Ascen. of Isa. 6-7; Midrash Tehillim on Ps. 114:1)

3. five heavens (III Baruch)

4. seven heavens (R. Simonb. Lakish; Ascen. of Isa. 9:7)

5. ten heavens (II Enoch 20:3b; 22:1)

All of these were meant to show God's separation from physical creation and/or His transcendence. The most common number of heavens in rabbinical Judaism was seven. A. Cohen, *Everyman's Talmud* (p. 30), says this was connected to the astronomical spheres, but I think it refers to seven being the perfect number (i.e., days of creation with seven representing God's rest in Genesis 2:2).

Paul, in 2 Cor. 12:2, mentions the "third" heaven (Greek *ouranos*) as a way of identifying God's personal, majestic presence. Paul had a personal encounter with God!

❖ **«որպեսզի ամեն ինչ լցնի»** Հիսուսն եկավ, որպեսզի իրականացնի Աստծո հավիտենական այն ծրագիրը, որով միաբանելու և փրկելու էր ամբողջ մարդկությանը, ինչպես նաև ֆիզիկական ստեղծագործությանը (տես՝ Հռոմ.8:19-21): Այս «լցնել» (*plēroō,* տես՝ Եփես.1:23, 3:19, 4:10, 5:18) տերմինը մի հատուկ տերմին էր, որը հրեշտակային մակարդակները (*աէոններր*) նկարագրելու համար կիրառում էին սուտ վարդապետները: Փրկությունը մարդկային գիտության մեջ չէ, այլ Քրիստոսի կատարած գործի՝ Նրա մարմնացման, կյանքի, ուսմունքների, խաչելության, հարության, համբարձման, բարեխոսության և խոստացված վերադարձի վրա ունեցած հավատքի մեջ:

4:11

NASB	**«Նա տվեց»**
NKJV	**«Նա Ինքը տվեց»**
NRSV	**«պարգևները, որ Նա տվեց»**
TEV	**«Նա էր, որ մարդկանց պարգևներ տվեց»**
NJB	**«իսկ մի քանիսին, նրա պարգևն էր»**

Քրիստոսն Ինքը, կամ ավելի ճիշտ՝ Երրորդությունը (տես՝ Եփես.4:4-6, 1 Կորնթ.12:4-6) տալիս է հոգևոր պարգևներ Իր/իրենց ժողովրդին: Հավատացյալները պարգևներով օժտված ծառայողներ են: Մի քանիսը առաջնորդներ են, սակայն բոլորն էլ ծառայողներ են: Մենք փրկվել ենք ծառայելու:

Պողոսի թղթերում կա հոգևոր պարգևների մի քանի ցանկ (տես՝ 1 Կորնթ.12:8-10, 28-30, Հռոմ.12:6-8, Եփես.4:11): Այս ցանկերը ճիշտ նույնը չեն: Սրանից կարելի է ենթադրել, որ այս ցանկերը սպառիչ չեն, այլ ներկայացուցչական: ՆԿ-ը երբեք չի տալիս պարգևների որոշիչ՝ վերջնական ցանկ կամ հավատացյալների համար մի ուղեցույց, որով կարող են իմանալ, թե իրենց որ պարգևն է տրվել: ՆԿ-ը չի կենտրոնանում պարգևների ճանաչողությանը վրա, այլ ծառայության բազմազան առանձնահատկությունների վրա: Մարդու հոգևոր պարգևը իմանալու՝ ճանաչելու համար տրված լավագույն ուղեցույցներից մեկը կարող եք գտնել Փոլ Լիթլի «Աստծո կամքի հաստատում» կոչվող IVP գրքույկում (Paul Little *"Affirming the Will of God"*): Աստծո կամքը հասկանալու համար տրված այս նույն ուղեցույցները կիրառելի են մարդու հոգևոր պարգևը հայտնաբերելու համար էլ:

❖ **«առաքյալներ»** Սա «Տասներկուսից» հետո էլ (տես՝ Գործք 14:4,14 - Բառնաբասը, Հռոմ.16:7 – Անդրոնիկոսն ու Հունիան, 1 Կորնթ.4:6,9, 12:28-29, 15:7 – Ապողոսը, Փիլ.2:25 – Եպափրոդիտոսը, 1 Թեսաղ.2:6 – Սիվղանոսն ու Տիմոթեոսը) կիրառվող մի տերմին է: Նրանց ստույգ գործը անհայտ է, սակայն այն բովանդակում է ավետարանի քարոզչություն և եկեղեցու ծառայողական առաջնորդություն: Նույնիսկ հնարավոր է, որ Հռոմ.16:7 (KJV «Հունիա») վերաբերում է իգական սեռի առաքյալի:

❖ **«մարգարեներ»** Այս պարգևով օժտված հավատացյալների ստույգ գործունեությունը նույնպես անհայտ է (տես՝ Գործք 11:28, 21:9-11, 15:32): Նրանք նույնը չեն ինչ ՀԿ-ի մարգարեները, որոնք գրեցին Սուրբ Գիրքը: Նոր Կտակարանյան մարգարեները կիրառում են Սուրբ Գիրքը նոր և տարբեր իրավիճակների համար: Նրանք կապված են առաքյալների, ավետարանիչների, հովիվների և ուսուցիչների հետ, քանի որ նրանք բոլորն էլ քարոզում են ավետարանը, սակայն տարբեր շեշտադրումներով: Տե՛ս Հատուկ Թեմա Եփես.2:20-ում:

❖ **«ավետարանիչներ»** Զարմանալիորեն, Մատթ.28:19-20-ի լույսի ներքո, այս պարգևը ՆԿ-ում նշվում է միայն երեք անգամ: Վաղ՝ առաջին եկեղեցում, նախորդող երկու պարգևների պես նրանց գործն էլ անհայտ է (տես՝ Գործք 21:8, 2 Տիմ.4:5), սակայն կրկին ակնհայտ է, որ դա իր մեջ բովանդակում է ավետարանի քարոզչություն և ծառայողական առաջնորդություն: Հնարավոր է, որ այս առաջին երեք պարգևներն ունեցող առաջնորդները ունեին շրջիկ կամ տարածաշրջանային ծառայություններ:

❖ **«հովիվներ և ուսուցիչներ»** «Ավագներ, երեցներ» (*presbuteroi*), «եպիսկոպոսներ» (*episkopoi*) և «հովիվներ» (*poimenas*) բոլոր տիտղոսներն էլ վերաբերում են մի գործառույթի և հետագայում պաշտոնի (տես՝ Գործք 20:17, 28, և Տիտոս 1:5-7): «Ավագ» տերմինն ունի ՀԿ-յան հիմք, մինչդեռ «եպիսկոպոս» կամ «վերակացու» տերմինն ունի հունարեն քաղաքային իշխանության հետ կապված հիմք: Հունարեն ստուգաբանությունը (մի շաղկապը /de/ և մի հողը /tous/) կապում է այս երկու տիտղոսներն իրար որպես մեկ գործառույթ, մի պարգևով օժտված մարդ, որը քարոզում և բացատրում է ավետարանը տեղական մասշտաբով:

Հետաքրքիր է, որ Հռոմ.12:7 և 12:28-ում ուսուցիչները նշվում են որպես առանձին պարգև, իսկ հովիվները ընդհանրապես նշված չեն (եթե իհարկե նրանք Հռոմ.12:8-ում նշված «նա, ով հորդորում է»-ն չեն): Այնքան բան կա, որ մենք ժամանակակիցներս չգիտենք վաղ եկեղեցու վերաբերյալ:

4:12

NASB	**«սրբերին ծառայության գործի համար պատրաստելու»**
NKJV	**«սրբերին ծառայության գործի համար սպառազինելու»**
NRSV	**«սրբերին պատրաստելու ծառայության գործի համար»**
TEV	**«Նա սա արեց Աստծո ամբողջ ժողովրդին Քրիստոնեական ծառայության գործի համար պատրաստելու»**
NJB	**«որպեսզի սրբերը ծառայության գործի մեջ միասին միաբանվեն»**

Առաջնորդները Աստծո պարգևն են՝ տրված մարզելու Քրիստոսի Մարմինը ծառայության գործի համար: Եկեղեցին կարիք ունի վերագտնելու զորությունը, պարգևները և աստվածաշնչյան այն առաջադրանքը, որը հանձնարարված է եկեղեցու բոլոր անդամներին (հոգևորական, թե աշխարհիկ, ահել, թե ջահել, կին, թե տղամարդ. տես՝ Հովել 2:28 մեջբերված Պետրոսի Պենտեկոստեի քարոզում՝ Գործք 2): Յուրաքանչյուր Քրիստոնյա ամբողջ դրույքով, Աստծուց կանչված, Աստծուց պարգև ստացած ծառայող է:

«Սպառազինել» տերմինը նշանակում է ինչ-որ բան անել առաջադրված նպատակին պատրաստ լինելու համար: Այն կիրառվում է հետևյալ դեպքերում՝

1. կոտրված վերջույթները բժշկվելու և կրկին օգտակար լինելու
2. ձկնորսական պատռված ցանցեր նորոգելու և հետո հնարավոր լինելու ձուկ որսալու
3. նավեր, որոնք հագեցված են պարաններով ու առագաստներով և պատրաստ ծով դուրս գալու՝ նավարկության
4. հավեր, որոնք այնքան են մեծացել, որ պատրաստ են շուկայում վաճառքի դրվելու

Նաև ուշադրություն դարձրե՛ք, որ նպատակն այն չէ, որ որոշ հավատացյալներ հասունանան, այլ՝ բոլորը (տես՝ Եփես.4:13): «Սրբեր»-ի համար տե՛ս Հատուկ Թեմա Կող.1:2-ում:

Պարգևները տրվում են յուրաքանչյուր հավատացյալի՝ ընդհանուրի բարիքի համար (տես՝ 1 Կորնթ.12:7,11): Ամեն մի հավատացյալ կանչված, պարգևով օժտված, Քրիստոսի լրիվ դրույքով ծառայող է: Ոչ բոլորն են «մասնագիտացված» ծառայողներ, սակայն բոլորն են ծառաներ: Ժամանակակից եկեղեցին հաշմանադամ է (1) հոգևորական – աշխարհական մտայնությամբ և (2) ծառայողի փոխհարաբերության պրոցեսի մեջ մտնելու փոխարեն փրկության գաղափարը որպես արդյունք ընդունելով:

❖ **«Քրիստոսի մարմնի շինության համար»** Պողոսը խառնում է շինության՝ շենքի փոխաբերությունը (տես՝ Եփես.2:20-27) մարմնի փոխաբերության հետ (տես՝ Եփես.1:23, 4:12, 5:30): Հավատացյալներին պարգևներ են տրված բոլորի բարիքի համար, ոչ թե անհատական զովասանքի (1 Կորնթ.12:7): Նպատակը անհատը չէ, այլ մարմինը (տես՝ Եփես.4:4-6): Հոգևոր պարգևները ծառայողի սրբիչներն են, ոչ թե արժանիքների կրծքանշանները: Հավատացյալները աշխատող մեղուներ են: Տե՛ս Հատուկ Թեմա. Շինություն տալ, Եփես.2:21:

4:13 «մինչև բոլորս էլ հասնենք» Սա անորոշ կատարյալ ներգործական ստորադասական է, որը պայմանականության բնույթ է արտահայտում: Բառացի նշանակում է «հասնել նպատակակետին»:

Ուշադրություն դարձրե՛ք, որ «բոլոր» բառը խոսում է մեր ընդհանուր՝ հավաքական պատասխանատվության մասին: Նկատե՛ք հասունության համար նշված երեք առանձնահատկությունները՝ (1) հավատքի միասնություն, (2) Աստծո Որդու ճանաչողությունից դեպի (3) Քրիստոսակերպ հասունություն: Նաև ուշադրություն դարձրե՛ք, որ նպատակն այն չէ, որ մի քանիսը հասունանան, այլ՝ բոլորը:

❖ **«ճանաչմանը»** Սա հունարեն բաղադրյալ տերմին է (*epiginōskō*), որը ենթադրում է լիարժեք փորձառական գիտություն՝ ճանաչողություն: Սա ակնհայտ կերպով մերժում էր գնոստիկ սուտ վարդապետների ծածուկ, բացառիկ գիտության շեշտադրությունը: Հավատացյալների գիտությունը կատարյալ է Քրիստոսի մեջ: Սա հնարավոր է բառախաղ լինի եբրայերենի «իմանալ» հասկացությունը որպես անձնական փոխհարաբերության (տես՝ Ծնն.4:1, Երեմ.1:5, Փիլ.3:8,10) ի հակադրություն հունարենի հասկացության՝ հայտնի որպես ճանաչողական տեղեկություն: Երկուսն էլ հասուն Քրիստոնյային անհրաժեշտ են:

❖ **«կատարյալ/հասուն մարդ»** Սա համար 14-ում նշված երեխաների հակադրությունն է: Հունարեն արմատը (*telos*) նշանակում է «կատարյալ», «լիարժեք պատրաստված», ոչ թե անմեղ, այլ կատարյալ (KJV):

4:14 «որպեսզի այլևս երեխա չլինենք» Սրանից կարելի է ենթադրել, որ շատ հավատացյալներ փրկվել էին, սակայն հասուն չէին (տես՝ 1 Կորնթ.3:1-3, Եբր.5:11-14): Նրանք դեռևս չէին զգում հնազանդության և նվիրման անհրաժեշտությունը, որոնք պետք էին ծառա սպասավորներ լինելու համար: Հավատացյալները պետք է մեռնեն իրենց անձի համար և կենդանի լինեն Աստծո համար (տես՝ Հռոմ.6:1-14, 2 Կորնթ.5:14-15, Գաղ.2:20, 1 Հովհ.3:16):

NASB	**«որոնք այս ու այն կողմ են տարուբերվում, վարդապետության ամեն մի քամուց քշվում են՝ մարդկանց խաբեբայությամբ, որոնք խորամանկությամբ խաբում ու մոլորեցնում են»**
NKJV	**«այս ու այն կողմ տարուբերված և վարդապետության ամեն մի քամուց քշված՝ մարդկանց խաբեբայությամբ, նենգ խորամանկությամբ, որով խաբում են՝ սպասելով մոլորեցնելու»**
NRSV	**«վարդապետության ամեն մի քամուց այս ու այն կողմ տարուբերված, մարդկանց խաբեբայությամբ, մոլորեցնող ծրագրերում իրենց խորամանկությամբ»**
TEV	**«քամուց տարուբերվող և մոլորեցնող մարդկանց ուսմունքի ամեն մի փոփոխական քամուց քշված, որոնք իրենց հորինած ստություններով ուրիշներին մոլորության են տանում»**
NJB	**«կամ այս կամ այն կողմ տարուբերված և ամեն տեսակ վարդապետության քամուց քշված, մարդկանց բոլոր խորամանկություններով հանդերձ և իրենց խելամտությամբ մոլորեցնելով»**

Ակնհայտ է, որ սա վերաբերում է սուտ վարդապետներին, որոնք կարծես թե հունական փիլիսոփայության և հրեական օրինապաշտության խառնուրդ էին: Այս արտահայտությունը վերաբերում է թե՛ մարդկային մոլորությանը (սուտ վարդապետները) և թե՛ հրեշտակային մոլորությանը (մոլորեցնող ծրագրի խորամանկությունը): Այս սուտ վարդապետների ետևում կանգնած էին ընկած հրեշտակների կարգերի գործողությունները (տես՝ Եփես.6:10-12, 1 Կորնթ.10:20, Դանիել 10): Աստծո ժողովուրդը խաբվում, շահագործվում և մոլորվում է, քանի որ Քրիստոսի մեջ հասուն չեն: Անգամ դարձի գալուց հետո հոգևոր պայքարը չի ավարտվում: Քրիստոնյայի նպատակը միայն երկինքը չէ, երբ մեռնեն, այլ Քրիստոսակերպությունն ու ծառայությունը հիմա (տես՝ Եփես.4:15, Հռոմ.8:28-30, Գաղ.4:19):

4:15 Հավատացյալները չպետք է միայն խոսեն ճշմարտությունը, այլ պետք է սիրով ապրեն և սովորեցնեն ճշմարտությունը (տես՝ Եզրաս 7:10): Նպատակը միաբանությունն է (Եփես.4:2-3): Ինչքա՞ն է սա տարբերվում սուտ վարդապետների մոլորությունից և մրցակցությունից:

4:16 Պողոսը կիրառում է մարդկային մարմնի փոխաբերությունը, որպեսզի շեշտադրի տարբերությունների մեջ սիրո միաբանությունը: Միաբան չլինելը դուռ է բացում Սատանայի, նրա հրեշտակների և սուտ վարդապետների համար (տես՝ Կող.2:8): Տե՛ս Հատուկ Թեմա. Ճինություն տալ, Եփես.2:21-ում:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻ 4:17-24

[17]Ուստի այս ասում ու վկայում եմ Տիրոջով, որ դուք այլևս այնպես չքայլեք, ինչպես մյուս հեթանոսներն են քայլում իրենց մտքի ունայնությամբ. [18]նրանց հասկացողությունը մթագնել է, Աստծո կյանքից օտարացել են իրենց մեջ եղող տգիտությամբ, իրենց սրտի կուրության պատճառով [19]որոնք անզգա դառնալով՝ անհագությամբ անձնատուր եղան անառակության և ամեն տեսակ անմաքուր գործերի: [20]Բայց դուք այսպես չսովորեցիք Քրիստոսին. [21]եթե դուք Նրա մասին լսեցիք և Նրանից սովորեցիք, ինչպես ճշմարտությունն է Հիսուսի մեջ, [22]ապա ձեր վրայից հանե՛ք հին մարդուն՝ իր նախկին վարքով, որ խաբուսիկ ցանկություններով ապականված է. [23]նորոգվեցե՛ք ձեր մտքի հոգով [24]և նոր մարդուն հագե՛ք ձեր վրա, որ ստեղծված է Աստծո պատկերով՝ արդարությամբ և ճշմարիտ սրբությամբ:

4:17

NASB	**«Այս ասում և հաստատում եմ Տիրոջով»**
NKJV	**«Ուստի այս ասում և վկայում եմ Տիրոջ մեջ»**
NRSV	**«Այժմ սա եմ հաստատում և պնդում Տիրոջով»**
TEV	**«Տիրոջ անունով, ուրեմն, սա եմ ասում և ձեզ զգուշացնում»**
NJB	**«Մասնավորապես, ուզում եմ ձեզ հորդորել Տիրոջ անունով»**

Տիրոջմով նմանատիպ հաստատության պնդումը ցույց է տալիս Պողոսի առաքելական իշխանությունը և Հիսուսի ուսմունքների գիտությունը:

❖ **«որ դուք այլևս այնպես չքայլեք»** Եփես.4:17-19-ում տրված են մի շարք առանձնահատկություններ, որոնք բնութագրում են հեթանոսական կյանքը՝ ապրելակերպը: Այս նորահավատներն ինքները նախկինում այդպես էին ապրում (տես՝ Եփես.4:28): Պողոսն իր թղթերում մի քանի անգամ թվարկում է մեղավոր մարդկության առանձնահատկությունները (տես՝ Հռոմ.1:29-31, 1 Կորնթ. 5:11, 6:9, 2 Կորնթ.12:20, Գաղ.5:19-21, Եփես.4:19, 31, 5:3-4, Կող.3:5-9): Տե՛ս Հատուկ Թեմա Կող.3:5-ում:

Պողոսի և հրեա օրինապաշտների միջև առկա գլխավոր տարաձայնություն այն էր, թե ինչպես հասնեն սրբության: Թե՛ Պողոսը և թե՛ հուդայականները ուզում էին նորադարձների մոտ տեսնել արդար պրելակերպ: Պողոսը գիտեր այս հավատացյալների անցյալի հեթանոսական մեղքերը, բայց հավատում էր, որ ձրի շնորհքը, նրանց ներսում բնակվող Հոգին, և ավետարանի աչող գիտությունը նրանց մեջ կարծարծեր այն, ինչ լեգալիզմը չէր կարող անել: Հին Կտակարանի գործերը այժմ փոխարինվել էին Նոր Կտակարանի նոր սրտով և մտքով (տես՝ Երեմ.31:31-34, Եզեկ.36:22-32):

NASB, NKJV, NRSV	**«իրենց մտքի ունայնությամբ»**
TEV	**«ում մտքերը անարժեք են»**
NJB	**«դատարկագլուխ կյանքը»**

Այս տերմինը նշանակում է «ունայն», «դատարկ», «աննպատակ» (տես՝ Հռոմ.1:21): 17-19 համարները վերաբերում են կա՛մ (1) սուտ վարդապետների խաբեություններին, կա՛մ էլ (2) հավատացյալների հեթանոսության մեջ ապրած նախկին կյանքերին:

4:18 «նրանց հասկացողությունը մթագնվել է» Սա վաղակատար կրավորական դերբայ է: Նրանց հոգևոր կուրության ներկայիս վիճակը (ինչպես և մեր) արդյունքն է (1) գերբնական փորձության, (2) հերետիկոսների ազդեցության, և (3) անձնական ընտրության:

❖ **«Աստծո կյանքից օտարացել են»** Սա մեկ այլ վաղակատար կրավորական դերբայ է: Սա վերաբերում է ՀԿ-յան ուխտի Աստծուց և Նրա խոստումներից զատվելուն՝ հեռանալուն (տես՝ Եփես.2:12):

❖ **«իրենց մեջ եղող տգիտության պատճառով»** Սա վերաբերում է ինքնակամ տգիտությանը (տես՝ Հռոմեացիների 1:18-3:20):

❖ **«իրենց սրտի կուրության պատճառով»** Սա անկման մնայուն արդյունքն է (տես՝ Ծննդ.3, Հովհ.3:17-25): Տե՛ս Հատուկ Թեմա.Սիրտ, Կող.2:2-ում:

4:19

NASB	**«դառնալով քարսիրտ»**
NKJV	**«լինելով անզգամ»**
NRSV	**«կորցրել են ամբողջ զգացողությունը»**
TEV	**«կորցրել են ամոթի բոլոր զգացողությունը»**
NJB	**«ճիշտ ու սխալի զգացողությունը բթացած լինելով»**

Սա ևս մեկ վաղակատար ներգործական դերբայ է: Ընկած՝ մեղավոր մարդկությունը զգացողության ոլորտում դարձել էր և մնացել անզգամ կամ խստասիրտ թե՛ բնական հայտնության հանդեպ (տես՝ Սաղմ.19:1-6, Հռոմ.1:18-2:16) և թե՛ Աստվածաշնչի հատուկ հայտնության, Որդու, և գրված խոսքի հանդեպ (տես՝ Սաղմ.19:7-12) և թե՛ կենդանի Խոսքի հանդեպ (տես՝ Հովհ.1:1-14):

NASB	**«ագահությամբ ամեն տեսակ անմաքուր գործերի համար»**
NKJV	**«ագահությամբ ամեն անմաքրություն գործելով»**
NRSV	**«ագահ ամեն տեսակ անմաքրություն գործելու»**
TEV	**«և անզուսպ կերպով ամեն տեսակ անպարկեշտ բաներ անելով»**
NJB	**«անհամբերությամբ հետևելով ամեն տեսակ անպարկեշտ գործի»**

Սա նշանակում է ցանկացած գնով ավելի ու ավելի շատ իմ համար (տես՝ Կող.3:5): Մեղավոր մարդկությունը կորցրել է ընդհանուրի բարիքի համար զգացողությունը: Մարդիկ ապրում են իրենք իրենց համար, այդ պահի համար: Սա Ծննդոց 3-ի Անկման անեծքն է: Այն շատ հստակ արտահայտվում է ժամանակակից արևմտյան հասարակության մեջ:

4:20 «Բայց դուք այսպես չսովորեցիք Քրիստոսին» Սա հզոր հակադրություն է Քրիստոսին քարոզողների և սուտ վարդապետների միջև: Համար 17-ը ակնարկում է հեթանոսության մեջ նրանց նախկին կյանքի և Քրիստոսի մեջ՝ նոր կյանքի միջև հակադրությունը:

4:21 «եթե» Սա առաջին կարգի պայմանական նախադասություն է, որը ենթադրվում է, որ ճիշտ է հեղինակի տեսանկյունից կամ նրա գրականական նպատակներից ելնելով: Այս հավատացյալները լսել էին ճշմարտությունը:

❖ **«Հիսուս»** Սա «Հիսուս» անունը ինքնին կիրառելու հազվադեպ տեղերից է Պողոսի թղթերում: Սա կարող է կապված լինել Հիսուս մարդու վերաբերյալ սուտ ուսմունքների հետ (այսինքն՝ Նրա մարդեղության վերաբերյալ) ի հակադրություն Քրիստոսի Հոգու (այսինքն՝ Նրա աստվածությունը): Գնոտիցիզմի մեջ Հիսուսը չէր կարող լինել կատարյալ մարդ, քանի որ «հոգին» (այսինքն՝ Աստված) բարի է, իսկ մատերիան (այսինքն՝ մարդը) չար է: Նրանք պնդում էին Նրա աստվածությունը, սակայն հերքում մարդեղությունը (տես՝ 1 Հովհ.4:1-6): Հետաքրքիր է, որ ժամանակակից հասարակությունը այժմ հակադարձել է այս հերձվածողությունը:

4:22 «հանե՛ք» Եփես.4:22, 23 և 24-ում կան երեք անորոշ կատարյալ ենթանախադասությունները: Հագուստը կիրառվում է որպես փոխաբերություն՝ նկարագրելու հոգևոր առանձնահատկություններ (տես՝ Հոբ 29:14, Սաղմ.109:29, և Եսայի 61:10): Սա նաև ապաշխարության և դրա արդյունքում փոխված կյանքի անհրաժեշտության վրա շեշտադրություն էր (տես՝ Մարկ.1:15, Գործք 3:16, 19, 20:21):

NASB	**«ձեր նախկին ապրելակերպով»**
NKJV	**«ձեր նախկին վարքով»**
NRSV	**«ձեր նախկին կյանքի ոճը»**
TEV	**«որը ձեզ ստիպում է ապրել այնպես, ինչպես սովոր էիք»**
NJB	**«թողեք ձեր հին ապրելաոճը»**

KJV թարգմանությունը տալիս է «խոսակցություն», որը նշանակում էր «ապրելակերպ» մ.թ.1611թ-ին, երբ գրվեց այս թարգմանությունը: Սա հստակ ցույց է տալիս թարգմանությունները վերանայելու՝ սրբագրելու անհրաժեշտությունը: Ոչ մի թարգմանություն ներշնչված չէ: Նրանց գործն է ավետարանը փոխանցել՝ հասցնել մեկ կամ մի քանի սերունդների: Միայն Աստծուց տրված բնագիր խոսքն է ներշնչված:

❖ **«հին մարդուն/անձին»** Սա վերաբերում է Ադամի մեջ մարդկության մեղավոր հատկություններին և հակումներին (տես՝ Հռոմ.6:6, Կող.3:9): Դա անձի առաջնայնությունն է, Աստծուց անկախությունը, ցանկացած գնով իմ համար ավելի ու ավելի շատը:

4:23 «նորոգվեցե՛ք ձեր մտքի հոգով» Սա ներկա կրավորական անորոշ է: Հավատացյալները պետք է շարունակեն իրենց մտածելակերպի մեջ նորոգվեն՝ թույլ տալով Հոգուն, որ իրենց մեջ զարգացնի Քրիստոսի միտքը (տես՝ Հռոմ.12:2, Տիտոս 3:5): Սա «նոր ուխտի» մի առանձնահատկությունն է Երեմ.31:31-34-ից (տես՝ Եզեկ.36:22-38):

4:24 «հագե՛ք» Սա աորիստ /անորոշ կատարյալ/ չեզոք սեռի անորոշ է: Սա հագուստի փոխաբերություն է, որը շեշտադրում է Քրիստոսի մեջ լինելու շարունակական որոշումը (տես՝ Հռոմ.13:14, Գաղ.3:27, Կող.3:8, 10, 12, 14, Հակ.1:21, 1 Պետ.2:1): Քրիստոսը հագնելու այս տերմինաբանությունը հնարավոր է նույնիսկ վաղ եկեղեցում կապված է եղել մկրտության արարողության հետ, երբ նորադարձները մկրտությունից հետո հագնում էին մաքուր, ճերմակ հանդերձներ: Դա արտահայտում է կամավոր ընտրությունը:

❖ **«նոր մարդուն/անձին»** Սա Քրիստոսի մեջ նոր կյանքի փոխաբերությունն է: Պետրոսը 2 Պետ.1:4-ում սա անվանում է «աստվածային էությանը մասնակից լինել»: Սա Եփես.4:22-ի հին ադամական բնության հակադարձն է:

❖ **«Աստծո պատկերով»** Հավատացյալները պետք է ունենան Աստծո ընտանիքի հատկությունները (տես՝ Հռոմ.8:28-29, Գաղ.4:19):Աստվածաշունչը շեշտադրում է Քրիստոսում մեր ունեցած դիրքը, ինչպես նաև այն, որ կարիք ունենք օրեցօր Քրիստոսին նմանվելու: Փրկությունը ձրի է, սակայն հասունություն ամեն բան արժե: Քրիստոնեությունը թե՛ կյանք է և թե՛ մահ, և՛ կետ է, և՛ ընթացք, և՛ պարգև է, և թե՛ վարձք: Ժամանակակից մարդկանց համար դժվար է այս պարադոքսը հասկանալ: Նրանք հակված են շեշտադրելու միայն մեկ կամ մյուս կողմը: Տե՛ս ստորև տրված Հատուկ Թեման:

❖ **«արդարությամբ»** Տե՛ս ստորև տրված Հատուկ Թեման:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ
SPECIAL TOPIC: RIGHTEOUSNESS

«Արդարությունը» այնպիսի կենսականորեն կարևոր թեմա է, որ աստվածաշնչյան յուրաքանչյուր ուսանող այս թեմայի շուրջ պետք է կատարի անձնական մանրակրկիտ սերտողություն:

ՀԿ-ում Աստծո բնավորությունը նկարագրվում է որպես «ուղիղ» կամ «արդար» (ԲԱՅ, BDB 842, KB 1003. ԱՐԱԿԱՆ ԳՈՅԱԿԱՆ, BDB 841, KB 1004, ԻԳԱԿԱՆ ԳՈՅԱԿԱՆ, BDB 842, KB 1006): Միջագետքյան այս տերմինը ծագել է «գետի եղեգից», որը գործածվում էր որպես շինարարական գործիք՝ ստուգելու պատերի և ցանկապատերի հորիզոնական հարթության ճշգրտությունը: Աստված ընտրեց այս տերմինը փոխաբերական իմաստով՝ Իր սեփական էությունը բնութագրելու համար: Նա ուղիղ է, Ում միջոցով կարելի է բոլոր բաները չափել: Այս հասկացությունը հաստատում է Աստծո արդարությունը, ինչպես նաև դատաստանի մեջ Նրա արդարացիությունը՝ շիտակությունը:

Մարդն Աստծո պատկերով ստեղծվեց (տես՝ Ծննդ.1:26-27; 5:1,3; 9:6): Մարդկությունը ստեղծվեց Աստծո հետ փոխհարաբերվելու համար (այսինքն՝ Ծննդ.3;8): Ամբողջ արարչագործությունը Աստծո և մարդկության շփման համար հանդիսանում է բեմ կամ հետին տեսարան՝ ֆոն: Աստված կամենում էր, որ Իր գլուխգործոցը՝ մարդը, ճանաչի, սիրի, ծառայի Իրեն և լինի Իր նման: Մարդու ազնվությունը փորձվեց՝ ստուգվեց (տես՝ Ծննդոց 3) և առաջին զույգը ձախողեց այս ստուգարքը: Արդյունքում Աստծո և մարդու միջև փոխհարաբերությունը խզվեց (տես՝ Հռոմ. 5:12-21):

Աստված խոստացավ վերականգնել և վերսկսել այդ փոխհարաբերությունը (տես՝ Ծննդ.3:15, տես՝ Հատուկ Թեմա.ՅԱՀՎԵԻ հավիտենական փրկության ծրագիրը): Նա դա արեց Իր կամքով, Իր իսկ Որդու միջոցով: Մարդիկ անկարող էին վերականգնել այդ ճեղքումը (տես՝ Հռոմ.1:18-3:20, Հայտնություն 5):

Մարդու անկումից հետո, Աստծո առաջին քայլը վերականգնման համար եղավ ուխտի գաղափարը՝ հիմնված Իր հրավերի և մարդու զղջացող, հավատարիմ, հնազանդ արձագանքի վրա (տես՝ Երեմ.31:31-34; Եզեկ.36:22-38): Անկման պատճառով, մարդիկ անկարող էին նույնիսկ ճիշտ գործողություններին (տես՝ Հռոմ.3:21-31; Գաղատացիների 3): Աստված Ինքը պետք է նախաձեռնությունը վերցներ Իր ձեռքը, որպեսզի վերականգներ ուխտադրույժ մարդկանց: Նա դա արեց՝

1. մարդկությանը հռչակելով արդար՝ Քրիստոսի գործի շնորհիվ (այսինքն՝ դատական արդարություն):
2. մարդկությանը ձիրաբար տալով արդարություն՝ Քրիստոսի գործի շնորհիվ (այսինքն՝ վերագրված արդարություն):
3. ապահովելով Սուրբ Հոգու բնակությունը մեր մեջ, որը մարդու մեջ արդարության պտուղն է տալիս (այսինքն՝ Քրիստոսակերպությունը՝ Աստծո պատկերի վերականգնումը):
4. վերականգնելով Եդեմի Պարտեզում ունեցած փոխհարաբերությունը (համեմատեք Ծննդոց 1-2-ը Հայտնություն 21-22-ի հետ)

Այնուամենայնիվ, Աստված պահանջում է կտակին՝ ուխտին համապատասխան արձագանք: Աստված դնում է օրենքները (այսինքն՝ ձրիաբար տալիս է.այսինքն՝ Հռոմեացիներ 5:8; 6:23) և ապահովում, իսկ մարդիկ պետք է պատասխանեն և շարունակեն պատասխանել՝

1. ապաշխարությամբ
2. հավատքով
3. հնազանդության ապրելակերպով
4. հարատևությամբ

Հետևաբար, արդարությունը Աստծո և Իր արարչագործության գլուխգործոցի միջև եղած ուխտի, փոխադարձ գործողություն է: Աստծո բնավորության, Քրիստոսի կատարած գործի և Սուրբ Հոգուց տված կարողության հիման վրա, որին յուրաքանչյուր անհատ պետք է անձնապես և հարատևորեն ճիշտ կերպով արձագանքի: Այս հասկացությունը կոչվում է «հավատքով արդարացում» (այսինքն՝ Եփես.2:8-9): Այն արծարծվում է Ավետարաններում, սակայն ոչ այս տերմինաբանությամբ: Հիմնականում այն սահմանվում է Պողոսի կողմից, որը 100 անգամից ավելի գործածում է հունարեն «արդարություն» տերմինը իր բազմաթիվ տարբերակներով:

Պողոսը, որպես ուսյալ ռաբբի, գործածում է *dikaiosunē* տերմինը Սեպտուագինտայում կիրառվող եբրայերենի *tsaddiq* տերմինի միևնույն իմաստով, և ոչ թե հունական գրականությունից: Հունական գրականության մեջ այս տերմինը կապված է այն անձնավորության հետ, որը հարմարվում է

Աստվածության և հասարակության սպասումներին՝ ակնկալիքներին (այսինքն՝ Նոյը, Հոբը): Եբրայերենում այս տերմինը մշտապես հանդիպում ենք ուխտի հետ առնչվող տերմինների գործածությամբ (տես՝ Հատուկ Թեմա. Ուխտ): ՅԱՀՎԵՆ արդար, բարեհամբույր, բարոյական Աստված է: Նա ուզում է, որ Իր ժողովուրդը արտացոլի Իր բնավորությունը: Փրկված մարդկությունը դառնում է նոր արարած (տես՝ 2 Կորնթ. 5:17; Գաղ. 6:15): Նոր արարած լինելը պատճառ է հանդիսանում աստվածահաճո նոր ապրելակերպի (տես՝ Մատթեոս 5-7; Գաղ. 5:22-24; Հակոբոս, 1 Հովհաննես): Քանի որ Իսրայելը աստվածապետություն էր, գոյություն չուներ հստակ սահմանազատում աշխարհիկի (հասարակական նորմերի) և հոգևորի (Աստծո կամքի) միջև: Այս տարբերությունը արտահայտվում է եբրայերեն և հունարեն տերմինների միջոցով, որոնք թարգմանվում են անգլերենում որպես «արդարացիություն» (հասարակության հետ առնչվող) և «արդարություն» (կրոնի հետ առնչվող):

Հիսուսի Ավետարանը (բարի լուրը) անկում ապրած մարդկության Աստծո հետ փոխհարաբերության մեջ վերականգնված լինելն է: Սա ի կատար ածվեց Հոր սիրո, ողորմության և շնորհքի միջոցով. Որդու կյանքի, մահվան և հարության միջոցով. և Սուրբ Հոգու մեզ հետամուտ լինելու և ավետարանին մոտեցնելու միջոցով: Արդարացումը Աստծո կողմից մեզ տրված ձրի պարգև է, սակայն դրա արդյունքը պետք է լինի աստվածապաշտությունը (սա Օգոստիանոսի տեսակետն է, որը ներկայացնում է Ռեֆորմացիայի կողմից ավետարանի ձրի լինելու կարևորումը և Հռոմի Կաթոլիկների կողմից՝ սիրո և հավատարմության փոխված կյանքի կարևորումը): Ռեֆորմատորների համար «Աստծո արդարություն», տերմինը ՕԲՅԵԿՏԻՎ ՍԵՌԱԿԱՆ հոլով է (այսինքն՝ մեղավոր մարդկության Աստծուն ընդունելի դարձնելու գործողությունը /վերջնական արդարացում/), մինչ Կաթոլիկների համար այն ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ՍԵՌԱԿԱՆ հոլով է, որը ավելի Աստծո նման դառնալու գործընթաց է /փորձառական պրոգրեսիվ արդարացում/: Իրականում իհարկե դրանք երկուսը միասին են:

Իմ կարծիքով ամբողջ Սուրբ Գիրքը, սկսած Ծննդոց 4 - Հայտնություն 20, Աստծո Եդեմի պարտեզում ունեցած փոխհարաբերության վերականգնման արձանագրություն է: Աստվածաշունչը սկսվում է Աստված և մարդ փոխհարաբերությամբ՝ սկզբնական միջավայրում (տես՝ Ծննդոց 1-2) և վերջանում է միևնույն միջավայրով (տես՝ Հայտնություն 21-22): Աստծո պատկերն ու նպատակը վերականգնվելու է:

Վերը նշված քննարկումները փաստագրելու համար նկատի ունեցեք հետևյալ ՆԿ-յան հատվածները, որոնք լուսաբանում են այս տերմինի հունարեն բառախումբը.

1. Աստված արդար է (հաճախ առնչվող Աստծո դատավոր լինելու հետ)
   ա. Հռոմեացիս 3:26
   բ. 2 Թեսաղոնիկեցիս 1:5-6
   գ. 2 Տիմոթեոս 4:8
   դ. Հայտնություն 16:5
2. Հիսուսն արդար է.
   ա. Գործք 3:14; 7:52; 22:14 (Մեսիայի անունը)
   բ. Մատթեոս 27:19
   գ. 1 Հովհաննես 2:1,29; 3:7
3. Աստծո կամքը Իր արարչագործության համար արդարություն է.
   ա. Ղևտացիների 19:2
   բ. Մատթեոս 5:48 (տես՝ 5:17-20)
4. Աստծո միջոցները արդարությունն իրականացնելու և ապահովելու համար.
   ա. Հռոմեացիներին 3:21-31
   բ. Հռոմեացիներին 4
   գ. Հռոմեացիներին 5:6-11
   դ. Գաղատացիներին 3:6-14
5. Աստծուց տրված՝
   ա. Հռոմեացիներին 3:24; 6:23
   բ. 1 Կորնթացիներին 1:30
   գ. Եփեսացիներին 2:8-9
6. Հավատքով ընդունված՝
   ա. Հռոմեացիներին 1:17; 3:22,26; 4:3,5,13; 9:30; 10:4,6,10
   բ. 2 Կորնթացիներին 5:21

7. Որդու գործերի միջոցով՝
   ա. Հռոմեացիներին 5:21
   բ. 2 Կորնթացիներին 5:21
   գ. Փիլիպեցիներին 2:6-11
8. Աստծո կամքն է, որ Իր հետևորդները արդար լինեն՝
   ա. Մատթեոս 5:3-48; 7:24-27
   բ. Հռոմեացիներին 2:13; 5:1-5; 6:1-23
   գ. Եփեսացիներին 1:4; 2:10
   դ. 1 Տիմոթեոս 6:11
   ե. 2 Տիմոթեոս 2:22; 3:16
   զ. Հովհաննես 3:7
   է. 1 Պետրոս 2:24
9. Աստծո կամքն է, որ արդարությամբ դատի աշխարհը՝
   ա. Գործք 17:31
   բ. 2 Տիմոթեոս 4:8

Արդարությունը բնորոշ է Աստծուն, որը Քրիստոսի միջոցով ձրի տրվել է մեղավոր մարդկությանը որպես՝

1. Աստծո պատվերը
2. Աստծո պարգևը
3. Քրիստոսի գործը
4. ապրելակերպը

Սակայն այն նաև իրենից ներկայացնում է արդար դառնալու գործընթաց, որին պետք է հարատևությամբ և վճռականությամբ հետամուտ լինել, և որը իրականում կավարտվի Երկրորդ Գալստյան ժամանակ: Աստծո հետ փոխհարաբերությունը վերականգնված է փրկությամբ, սակայն զարգանում է մեր ամբողջ կյանքի ընթացքում, որպեսզի դառնա մահվան կամ *Parousia* հետ դեմ-առ-դեմ իրադարձություն (տես՝ 1 Հովհ. 3:2):

Այս քննարկումն ամփոփելու համար ահա մի գեղեցիկ մեջբերում: Այն վերցված է *Պողոսի Բառարանը և Նրա Նամակները* IVP /*Dictionary of Paul and His Letters* from IVP/ գրքից:

«Կալվինը, ավելի քան Լյութերը, շեշտադրում է Աստծո արդարության ռացիոնալ առանձնահատկությունը: Լյութերի տեսակետը Աստծո արդարության վերաբերյալ կարծես թե պարունակում է արդարացման առանձնահատկությունը: Կալվինը շեշտադրում է Աստծո արդարության մեզ փոխանցելու կամ հաղորդելու զարմանահրաշ բնույթը» (էջ 834):

Ինձ համար Աստծո հետ հավատացյալի փոխհարաբերությունը ունի երեք կետ.

1. Ավետարանը անձ է (Արևելյան Եկեղեցու և Կալվինի շեշտադրումը)
2. Ավետարանը ճշմարտությունն է (Օգոստինոսի և Լյութերի շեշտադրումը)
3. Ավետարանը փոխված կյանքն է (Կաթոլիկների շեշտադրումը)

Նրանք բոլորն էլ ճիշտ են և պետք է միավորվեն առողջ, ողջամիտ, աստվածաշնչյան Քրիստոնեության համար: Դրանցից որևէ մեկը գերագնահատվելու կամ թերագնահատվելու դեպքում ի հայտ կգան խնդիրներ:

Մենք պետք է ընդունե՛նք Հիսուսին:
Մենք պետք է հավատա՛նք Ավետարանին:
Մենք պետք է հետամո՛ւտ լինենք Քրիստոսակերպությանը:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻ 4:25-32

[25]Ուստի ստությունը դեն գցելով՝ ամեն մարդ ճշմարտությունը թող ասի իր դրացուն, որովհետև մենք մեկմեկու անդամներն ենք: [26]Դողդողացե՛ք և մեղք մի գործե՛ք: Արևը ձեր բարկության վրա

մայր չմտնի, [27]և Սատանային տեղ մի՛ տվեք: [28]Ով գողանում էր, թող այլևս չգողանա, ընդհակառակը՝ աշխատի իր ձեռքերով ու բարին գործի, որպեսզի կարողանա կարիք ունեցողին տալ: [29]Երբեք ձեր բերանից ապականող խոսակցություն դուրս չգա, այլ, ինչ շինության համար բարի ու պիտանի է, որպեսզի լսողներին շնորհով լցնի: [30]Եվ մի՛ տրտմեցրեք Աստծո Սուրբ Հոգուն, որով կնքվեցիք փրկության օրվա համար: [31]Թող ձեր միջից վերացվի ամեն դառնություն, բարկություն, զայրույթ, աղաղակ և հայհոյություն՝ իրենց չար հետևանքներով հանդերձ: [32]Միմյանց հանդեպ քա՛ղցր եղեք, գթած, իրար ներելով, ինչպես որ Աստված Քրիստոսով ձեզ ներեց:

4:25 «դեն գցելով» Սա անորոշ կատարյալ չեզոք սեռի դերբայ է, որը կիրառված է որպես հրամայական: Այն շարունակում է հանդերձի փոխաբերությունը (տես՝ Եփես.4:24): Հավատացյալին պետք է կատարել սկզբնական որոշում, որին հետևի կրկնվող (այսինքն՝ ամենօրյա, նույնիսկ ամեն ժամյա) որոշումներ՝ սուրբ կյանք ապրելու համար: Տե՛ս <u>Հատուկ Թեմա. Արատներն ու առաքինությունները ՆԿ-ում</u>, Կող.3:5-ում:

❖ **«ստություն»** Սա վերաբերում է կա՛մ՝
1. խաբելուն
2. անհավատության «ստին», ինչպես որ կիրառված է 1 Հովհ.2:22-ում
3. սուտ վարդապետների ուղերձին

❖ **«ամեն մարդ ճշմարտությունը թող ասի իր դրացուն»** Սա մեջբերում է Զաքարիա 8:16-ից: Ուշադրություն դարձրե՛ք, որ Պողոսը մեջբերում է ՀԿ-ը որպես քաջալերանք նոր ուխտի հավատացյալների համար (տես՝ Եփես.4:26): ՀԿ-ը փրկության միջոց չէ, այնուհանդերձ այն Աստծո հայտնված և լիազորված հայտնությունն է (տես՝ Մատթ.5:17-19): ՀԿ-ը դեռևս գործում է սրբացման համար, բայց ոչ արդարացման: Տե՛ս Հատուկ Թեմա. Ճշմարտություն, Եփես.1:13-ում:

❖ **«որովհետև մենք մեկմեկու անդամներն ենք»** «Մարմինը» Պողոսի կիրառած փոխաբերություններից մեկն է եկեղեցու համար (տես՝ 1 Կորնթ.12:12-30): Հավատացյալներին պարգևներ են տրված ընդհանուրի՝ բոլորի բարիքի համար (տես՝ 1 Կորնթ.12:7): Հավատացյալներն ապրում են ընտանիքի համար: Նրանք չեն կարող ապրել որպես մեկուսի անհատներ:

4:26 «Դողդողացե՛ք /բարկացե՛ք/, և մեղք մի՛ գործեք» Սա ներկա չեզոք (դեպոնենտ) հրամայական է: Սա մեջբերում է Սաղմ.4:4-ից: Գոյություն ունեն կյանքի որոշ ոլորտներ, որտեղ բարկությունը տեղին է, սակայն այն պետք է կառավարել պատշաճ կերպով (այսինքն՝ Հիսուսը Տաճարը մաքրելիս, տես՝ Հովհ.2:13-17):

Սա սկսում է մի շարք ներկա ժամանակի հրամայականներ՝ ժխտական հոդերով, որոնք սովորաբար նշանակում են դադարեցնել այն գործողությունը, որն արդեն ընթացքի մեջ է (տես՝ Եփես.4:26, 27, 28, 29 և 30):

❖ **«Արևը ձեր բարկության վրա մայր չմտնի»** Սա հնարավոր է ակնարկ է 2 Օրինաց 24:15-ին: Հրեական օրը սկսում էր մայրամուտին (տես՝ Ծննդ.1:5): Բարկությունը հզոր զգացմունք է, որի հարցերը պետք է արագ լուծել: Սա կարող է փոխաբերական իմաստ ունի ժամանակի կամ բառացիորեն քնելու առումով, որը թույլ է տալիս բարկությանը դառնալու ենթագիտակցական ուժ:

4:27

NASB	**«չարին առիթ մի՛ տվեք»**
NKJV	**«ո՛չ էլ չարին տեղ տվեք»**
NRSV	**«չարին տեղ մի՛ տվեք»**
TEV	**«Չարին հնարավորություն մի՛ տվեք»**
NJB	**«այլապես դուք չարին ոտնատեղ կտաք»**

Սա ներկա ներգործական հրամայական է՝ ժխտական հոդով, որը սովորաբար ենթադրում է ընթացքի մեջ գտնվող գործողության դադարեցում: Բարկությունը, որն աստվածահաճո չէ, հոգևոր հարձակման համար բաց դուռ է. անգամ աստվածահաճո բարկությունը (տես՝ Հովհ.2:13-17, Մատթ.21:12-13) պետք է արագ կերպով հանդարտեցվի (տես՝ Եփես.6:10-18):

«Չար» տերմինը հունարեն բաղադրյալ բառ է (*diabolos*), որը նշանակում է «շուռ տալ» (տես՝ Գործք 13:10, Եփես.4:27, 6:11, 1 Տիմ.3:6,7, 2 Տիմ.2:26): Սա փոխաբերական իմաստով կիրառված բառ է, որը վերաբերում է զրպարտիչ Սատանային: Պողոսը մի քանի տվածներում նկատի է ունենում Սատանային (տես՝ Գործք 26:18, Հռոմ.10:20, 1 Կորնթ.5:5, 7:5, 2 Կորնթ.2:11, 11:14, 12:7, 1 Թեսաղ.2:18, 2 Թեսաղ.2:9, 1 Տիմ.1:20, 5:15): Ըստ երևույթին Սատանան հրեշատակային էակ է, որն ապստամբեց Աստծո դեմ (տես՝ Ծննդ.3, Հոբ.1-2, Զաք.3): Դժվար է ծոսել Սատանայի մասին ըստ Աստվածաշնչի, քանի որ՝

1. Աստվածաշունչը երբեք որոշակիորեն չի խոսում չարի սկզբի՝ ծննդյան կամ նպատակի մասին
2. ՀԿ-յան տեքստերը, որոնք սովորաբար դիտարկվում են որպես հավանաբար Սատանայի ապստամբության հետ կապ ունեցող, մասնավորապես ուղղված են երկրավոր հպարտ իշխանների դատապարտությանը (Բաբելոնի Թագավորը՝ Եսայի 14, և Տյուրոսի Թագավորը՝ Եզեկիել 28) և ոչ թե Սատանային (տես՝ <u>Հատուկ Թեմա. Անձնական չարը</u>, Եփես.2:2-ում):

ՆԿ-յան մի քանի հատվածներից ակնհայտ է, որ հոգևոր տիրույթում բախում է եղել (Մատթ.4:10, 12:26, 16:23, Հովհ.13:27, 14:30, 16:11, Գործք 5:3, 2 Կորնթ.4:4, Եփես.2:2, 1 Հովհ. 5:19, Հայտն.2:9, 13, 24, 3:9, 12:9, 20:2,7): Որտեղ, երբ, և ինչպես, դրանք բոլորն էլ առեղծվածներ են: Հավատացյալները <u>իրականում</u> ունեն հրեշտակ թշնամի (տես՝ Եփես.2:2):

Աստծո և Սատանայի միջև փոխհարաբերությունը ծառայությունից զարգացել է մինչև անտագոնիզմի՝ հակամարտության: Սատանան չի ստեղծվել չար: Ծննդոց 3-ում, Հոբ 1-2-ում և Զաքարիա 3-ում նրա թշնամական գործողությունները Աստծո կամքի մեջ էին (տես՝ Ա.Բ. Դեյվիդսնի *Հին Կտակարանի Աստվածաբանություն,* էջ՝ 300-306, /A.B. Davidson's *An Old Testament Theology*/ Աստվածաշնչում չարի կատարելագործման վերաբերյալ): Այն ապահովեց մարդկության հավատարմության և վստահելիության համար ստուգարքը: Մարդը ձախողեց:

4:28 «Ով գողանում էր, թող այլևս չգողանա» Քրիստոսում նոր կյանքն ունի պոտենցիալ և նպատակն է արմատապես և մշտապես փոխել մարդու գործողություններն ու բնավորությունը: Այս փոփոխությունը ապացույց է մարդու փրկության մասին և վկայություն՝ մեղավորների համար:

❖ **«նա պետք է աշխատի/ աշխատի իր ձեռքերով»** Սա ներկա ներգործական հրամայական է: Հուդայականությունը ձեռքի աշխատանքը բարձր է գնահատում, այդպես էր նաև վաղ Քրիստոնեության շրջանում (տես՝ 1 Թեսաղ.4:11, 2 Թեսաղ.3:10-12):

❖ **«որպեսզի կարողանա կարիք ունեցողին տալ»** Աշխատանքը ոչ միայն մարդկության համար Աստծո կամքն է (այսինքն՝ Ադամը աշխատեց Եդեմի պարտեզում նախքան մեղք գործելը նույնպես), այլ նաև կարիքավորներին օգնելու համար: Հավատացյալները աստվածատուր բարգավաճման տնտեսներ են (տես՝ 2 Օր.8:11-20), ոչ թե սեփականատերեր: Մեր տալու ունակությունը համարվում է հոգևոր առողջության ճշմարիտ ջերմաչափը (տես՝ 2 Կորնթ.8-9):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆ /Wealth/

4:29

NASB	**«Թող ոչ մի անառողջ խոսք դուրս չգա ձեր բերանից»**
NKJV	**«Թող ձեր բերանից ապականող խոսակցություն դուրս չգա»**
NRSV	**«Թող ոչ մի չար զրույց դուրս չգա ձեր բերանից»**
TEV	**«Խոսելիս վնասակար բառեր մի՛ օգտագործեք»**
NJB	**«Զգուշացե՛ք կեղտոտ խոսքերից»**

Այս տերմինը բառացի կիրառվում էր ինչ-որ նեխած բաների համար կամ փլվող քարե գործի համար (տես՝ Մատթ.7:17-18, 12:37, Ղուկ.6:43): Այն սկսեցին կիրառել «ապականված», «այլասերված», «արատավոր», «կեղտոտ» կամ «անմաքուր» բաների համար փոխաբերական իմաստով:

Համատեքստում այն վերաբերում է սուտ վարդապետների ուսմունքներին և կյանքերին (տես՝ Կող.3:8): Այս համատեքստում այն չի վերաբերում հումորներին կամ կոպիտ կատակներին (տես՝ Եփես.5:4, Կող.4:6): Հիսուսը սովորեցնում էր, որ մարդու խոսքը հայտնում է նրա սիրտը (տես՝ Մարկ.7:15, 18-23): Տե՛ս Հատուկ Թեմա.Մարդկային Խոսք, Կող.3:8:

❖ **«այլ, ինչ շինության համար բարի ու պիտանի է»** Աստվածատուր հոգևոր պարգևների ապացույցներից մեկն այն է, որ դրանք շինություն են հանդիսանում ամբողջ մարմնի համար (եկեղեցու, տես՝ 1 Կորնթ.12:7), և ոչ թե միայն իրենց (տես՝ Եփես.4:3): Դարձյալ մարդու անհատական ազատությունից առավել շեշտադրվում է աստվածաշնչյան հավատքի հավաքական առանձնահատկությունը (տես՝ Հռոմ.14:1-15:13): Տե՛ս Հատուկ Թեմա. Շինություն տալ, Եփես.2:21-ում:

❖ **«որպեսզի լսողներին շնորհով լցնի»** Ըստ համատեքստի սա չի կարող նշանակել «շնորհ» որպես փրկության համար, այլ բարություն կամ բարեհաճություն ցուցաբերել ուրիշ հավատացյալների հանդեպ, հատկապես նրանց, ովքեր փորձվում կամ ստուգվում են՝ (1) սուտ վարդապետների կողմից (տես՝ 2 Պետ.2:1-21) կամ (2) հեթանոսության մեջ մարդու նախկին կախվածությունն է հետ կանչում (տես՝ 2 Պետ.2:22):

4:30 «Եվ մի՛ տրտմեցրեք Աստծո Սուրբ Հոգուն» Սա ներկա ներգործական հրամայական է՝ ժխտական հոդով, որը սովորաբար նշանակում է ընթացքի մեջ գործողությունը դադարեցնել: Սա արտահայտում է այն ճշմարտությունը, որ Սուրբ Հոգին անձ է: Նաև ցույց է տալիս, որ հավատացյալների գործողությունները Սուրբ Հոգուն ցավ են պատճառում (տես՝ 1 Թեսաղ.5:19): Սա կարող է մեջբերում լինել Եսայի 63:10-ից: Բոլոր հավատացյալների համար Հոգու նպատակը Քրիստոսակերպությունն է (տես՝ Եփես.1:4, 2:10, 4:13, Հռոմ.8:28-29, Գաղ.4:19): Տե՛ս Հատուկ Թեմա. Հոգու անձ լինելը, Եփես.1:14-ում:

❖ **«որով կնքվեցիք»** Սա անորոշ կատարյալ կրավորական սահմանական է: Այս կնքումը կատարվում է Սուրբ Հոգու կողմից փրկության ժամանակ (տես՝ Եփես.1:13-14, Հայտն.7:2-4): Կնիքը համարվում էր սեփականության, ապահովագրության, և իսկության մշակութային նշան: Հավատացյալները պատկանում են Քրիստոսին: Տե՛ս Հատուկ Թեմա. Կնիք, Եփես.1:13-ում:

❖ **«փրկության օրվա համար»** Սա վերաբերում է Երկրորդ Գալստյանը, Հարության Օրվան կամ Դատաստանի Օրվան, որը կախված է, թե Քրիստոսի հետ անձը ինչ փոխհարաբերության մեջ է: Տե՛ս Հատուկ Թեմա. Փրկագին, փրկագնել, Կող.1:14-ում: Այս համարի շուրջ հետաքրքիր քննարկման համար կարդացե՛ք Գորդն Ֆիի, *Բացատրական մեկնության վերջը,* էջ՝ 262-275:

4:31 «ամեն դառնություն» Սա վերաբերում է առանց հաշտության հնարավորության թշնամության հաստատուն մի վիճակի:

❖ **«զայրույթ»** Այս (*thumos*) վերաբերում է արագ բռնկվող բարկությանը կամ զայրույթին (տես՝ 2 Կորնթ.12:20, Գաղ.5:20, Կող.3:8):

❖ **«բարկություն»** Այս (*orgē*) բառը վերաբերում է դանդաղ այրվող կամ հաստատուն վրդովմունքին՝ զայրույթին (տես՝ 2 Կորնթ.12:20, Գաղ.5:20, Կող.3:8):

❖ **«աղաղակ»** Սա վերաբերում է գոռգոռոցին (տես՝ Մատթ. 25:6, Գործք 23:9): Այս համատեքստում այն պետք է որ վերաբերի բարձրաձայն սպառնալիքներին կամ հանցանքների մեղադրանքներին սուտ վարդապետների կամ նրանց հետևորդների կողմից:

❖ **«հայհոյություն՝ իրենց չար հետևանքներով հանդերձ»** Սա նաև կարող է արտացոլել սուտ վարդապետների վարվելամիջոցները: Այս ցանկը ցույց է այն խնդիրները, որոնք ի հայտ են եկել (1)

սուտ վարդապետների պատճառով կամ (2) այն առանձնահատկությունների պատճառով, որոնք աղճատում են միաբանությունը: Այս նույն մեղքերը նաև թվարկվում են Կող.3:8-ում:

❖ **«վերացվի»** Սա անորոշ կատարյալ կրավորական հրամայական է: Հավատացյալները պետք է թույլ տան Հոգուն հեռացնելու այս հին, մեղավոր Ադամական բնության բնավորության գծերը մեկ անգամ և ընդմիշտ: Ինչպես որ փրկությունն է բովանդակում վճռական անձնական որոշում, այնպես էլ Քրիստոնեական կյանքը:

4:32 «Միմյանց հանդեպ քա՛ղցր եղեք, գթած, իրար ներելով» Սա հակադրվում է Եփես.4:31-ին: Սա ներկա չեզոք սեռ (դեպոնենտ) հրամայական եղանակ է: Սրանք դրական շարունակական հրամաններ են (տես՝ Կող.3:12-13), որոնք՝

1. հաճեցնում են Հոգուն
2. սրբերի հաղորդակցության շինության համար է
3. գրավում է մեղավոր՝ կորած մարդկանց

❖ **«ինչպես որ Աստված Քրիստոսով ձեզ ներեց»** Քրիստոսի գործողություններն իրենց հանդեպ ընդգծված դրդապատճառ է հավատացյալների գործողությունների համար (տես՝ Մատթ.6:12, 14-15, 18:21-35, Փիլ.2:1-11, 1 Հովհ.3:16):

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա <u>ուղեցույց</u> հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Նշե՛ք «արժանավայել կյանքի» առանձնահատկությունները: Ինչպիսի՞ն է ձեր կյանքը, երբ համեմատում եք:
2. Ինչո՞ւ է միաբանությունը այդքան կարևոր:
3. Ի՞նչ է շեշտադրում Պողոսը 4-6 համարներում:
4. Արդյո՞ք յուրաքանչյուր Քրիստոնյա ունի պարգև: Ե՞րբ են նրանք ստանում պարգևները: Ո՞վ է տալիս: Ի՞նչ նպատակով:
5. Ո՞րն է եկեղեցու նպատակը:
6. Թվարկե՛ք հեթանոսների վիճակը՝ կացությունը (Եփես.4:17-19):
7. Թվարկե՛ք երեք բան, որ պետք է անեն Քրիստոնյաները (Եփես.4:22-24):
8. Թվարկե՛ք Եփես.4:25-31-ում նշված Քրիստոնյաների չոր արատները: